Հաստատում եմ՝ Digitally signed by GALSTYAN KNARIK 7309740556

Դպրոցի տնօրեն՝ /Ք.Գալստյան/

# 2023-2024 ուստարի
# ՀՀ Արմավիրի մարզ
# «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
# Թեմատիկ պլանավորում
# Մայրենի
# IV բ դասարան

Տարեկան՝ 306 դ/ ժամ

Շաբաթական՝ 9 ժամ

Դասվար՝ Հ . Շերոյան

Քննարկվել է մասնախմբի թիվ 1 նիստում

Մասնախմբի նախագահ՝ /ԳԱվագյան/

Ստուգված է:

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ /Ռ. Գասպարյան/

Թեմատիկ պլանավորում 2023-2024

Մայրենի – IV Բ դասարան

Տարեկան՝ 306 դ/ ժամ

Շաբաթական՝ 9 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան

| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք |
|---|---|---|
| ՈՒմ նվիրեմ իմ սիրտը | . Ճիշտ, հասկանալով, արտահայտիչ ընթերցանություն՝ գրական արտասանության հիմնական կանոնների պահպանումով: Ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում: Ընթերցանությունը պլանավորելու, ապա վերլուծելու կարողության զարգացում .Ստեղծագործության հերոսին, հետաքրքիր հերոսին, բնության նկարագրում: Դեպքերի նկարագրության տրամաբանական հաջորդականության և մտքի ճշտության պահպանում: .Բառերի, բառակա պակցությունների և դարձվածքների գործառական կարո ղությունների զարգա ցում: Դարձվածային | Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը: Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը: Հասկանալ տեքստի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև կապերը: .Արտահայտիչ արտասանել չափածո և արձակ գրական ստեղծագործություններից հատվածներ: Պատմել կամ վերապատմել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը և վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, հերոսների վարքագծի վերաբերյալ: Առաջադրված հարցերին պատասխանելու համար տեղեկություններ որոնել, գտնել: Օգտվել բառարաններից, մանկական հանրագիտարաններից, ուսումնական ձեռնարկներից: |

| | | |
|---|---|---|
| | իմաստով գործածված բառակապակցությունների ճանաչում տեքստում։<br>Իմանա գոյական անուն խոսքի մասը, կարողանա տարբերել անձ և իր ցույց տվող գոյականները։ | |

| № | Ժամ. | էջ | Դաս | |
|---|---|---|---|---|
| 1. | 1 | 3 | Ս. Մուրադյան Յոթ սրբություն /անգիր/ | |
| 2. | 1 | 4-5 | Լավ ընկերը 1 /ընթերցել/ | Առաջ 1/ էջ 5/ |
| 3. | 1 | 4-5 | Լավ ընկերը 1 /ընթերցել/ | |
| 4. | 1 | 4-5 | Լավ ընկերը 1 /պատմել/<br>Բառերի կազմություն։ | Առաջ 2,5/էջ5<br>էջ 6 / |
| 5 | 1 | 7-8 | Լավ ընկերը 2 /ընթերցել/<br>Բառի կազմությունը | Առաջ 1,2 /էջ 9/<br>Առաջ.3,4 /էջ 9/ |
| 6. | 1 | 7-8 | Լավ ընկերը 2 /ընթերցել/<br>Բառի կազմությունը | |
| 7. | 1 | 7-8 | Լավ ընկերը 2 /ընթերցել/ | |
| 8. | 1 | | Ի/ը. « Կոմիտաս» /էջ 10-17/ | Կարդալ,պատմել |
| 9. | 1 | | Խ/h | |
| 10. | 1 | | Գր. աշխ. Բառերի կազմությունը | |
| 11. | 1 | | Գր. աշխ. Բառերի կազմությունը | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 12. | 1 | 7-8 | Լավ ընկերը 2 /ընթերցել , պատմել /<br>Բառի կազմությունը | Կարդալ,պատմել<br>էջ 7,8 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13. | 1 | 10- | Ն. Էբրահիմի  Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը | Առաջ. 1 |
| 14. | 1 | 11 | Ն. Էբրահիմի  Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը | Առաջ . 2 |
| 15. | 1 | 12 | Ն. Էբրահիմի Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը /ընթերցել/ | Առաջ. 3 |
| 16. | 1 | 10-12 | Ն. Էբրահիմի Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը /,պատմել/ | Առաջ. 6 /էջ 13/ |
| 17. | 1 | | Ինքն / ընթ « Ալեքսանդր Սպենդիարյան» /էջ 18-23 | Կարդալ,պատմել |
| 18. | 1 | | Խ/հ. | |
| 19. | 1 | | Գր. աշխ. | |
| 20. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 21. | 1 | 15 | Հ. Շիրազ  Հայրս /ընթերցել/<br>Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ | Առաջ. 1,2/էջ19/ |
| 22. | 1 | 15 | Հ.Շիրազ  Հայրս /անգիր/<br>Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ | Առաջ. 4 |
| 23. | 1 | 18 | Դ. Ուկլեբա –Գրիգորյան  Մոր ժպիտը  / | Առաջ. 3 /էջ 19 |
| 24. | 1 | | Դ. Ուկլեբա –Գրիգորյան  Մոր ժպիտը  / | |
| 25. | 1 | 18 | Դ.Ուկլեբա –Գրիգորյան  Մոր ժպիտը  /անգիր/ | Առաջ. 4/էջ19/ |
| 26. | 1 | | Ինքն /ընթ.« Արամ Խաչատրյան» /էջ 24-28/ | Կարդալ,պատմել |
| 27. | 1 | | Խ/հ | |
| 28. | 1 | | Գր. աշխ. փոխադրություն | |
| 29. | 1 | | Գր. աշխ. Ինքնաթելադրություն | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 30. | 1 | 20 | Էդմոնդո դե Ամիչիս Մոր նամակը  /ընթերցել/ | Առաջ.1,2 /էջ 21 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 31. | 1 | 20 | Էդմոնդո դե Ամիչիս Մոր նամակը /պատմել/ | Առաջ. 5էջ22 |
| 32. | 1 | 23 | Ս. Կապուտիկյան Տղայիս /ընթերցել/ | Առաջ. 1,2էջ24 |
| 33. | 1 | | Ս. Կապուտիկյան Տղայիս /ընթերցել/ | |
| 34. | 1 | 23 | Ս. Կապուտիկյան Տղայիս /անգիր/ | Առաջ 4էջ 24 |
| 35. | 1 | | Ինքն/ընթ. « Առնո Բաբաջանյան»/ էջ 29-36/ | Կարդալ,պատմել |
| 36. | 1 | | Խ/հ. | |
| 37. | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 1 | |
| 38. | 1 | | Գր. աշխ. Բացատրական թելադրություն | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 39. | 1 | 25 | Ս. Մկրտչյան Թագավորն ու հողագործը | կարդալ |
| 40. | 1 | 25-26 | Ս. Մկրտչյան Թագավորն ու հողագործը / | Կարդալ Առաջ.2,3 |
| 41. | 1 | 25-26 | Ս. Մկրտչյան Թագավորն ու հողագործը /պատմել/ | Պատմել Առաջ.4,5,էջ27 |
| 42. | 1 | 28 | Հ. Սահյան Պապը | կարդալ |
| 43. | 1 | 28 | Հ. Սահյան Պապը | Անգիր Առաջ. 3,5/էջ29 |
| 44. | 1 | | Ինքն/ընթ«Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ»/էջ 37-41/ | Կարդալ,պատմել |
| 45. | 1 | | Խոսք և հաղորդակցում | |
| 46. | 1 | | Գր. աշխ. ստեղծագործական արտագրություն լեզվական նյութին վերաբերող առաջադրանքներով | |
| 47. | 1 | | Գր. աշխ. թելադրություն լեզվական նյութին վերաբերող առաջադրանքներով | |
| | Ժամ. | էջ | Դաս | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 48. | 1 | 31 | Շնիկը /ընթերցել/ | Առաջ. 3/էջ 33/<br>Առաջ4 /էջ<br>/Առաջ. 5/էջ 33/ |
| 49. | 1 | 32 | Շնիկը /ընթերցել/ | |
| 50. | 1 | 31-32 | Շնիկը /ընթերցել / | |
| 51. | 1 | 31-32 | Շնիկը /պատմել/ | Կարդալ ,պատմել |
| 52. | 1 | 34 | Պ. Խաչատրյան Ծառի խնդրանքը<br>Գոյական.անձ և իր ցույց տվող գոյականներ | կարդալ |
| 53. | 1 | | Ինքն/ընթ«Լյուդվիգ Վան Բեթհովեն» /էջ 42-48 | Կարդալ,պատմել |
| 54. | 1 | | Խոսք և հաղորդակցում | |
| 55. | 1 | | Գր. աշխ | |
| 56. | 1 | | Գր. աշխ. | |
| Ժամ. | | էջ | Դաս | |
| 57. | 1 | 34 | Պ. Խաչատրյան Ծառի խնդրանքը<br>Գոյական.անձ և իր ցույց տվող գոյականներ | /անգիր/<br>Առաջ1,2 /էջ35 |
| 58. | 1 | 34-35 | Պ. Խաչատրյան Ծառի խնդրանքը /վերլուծություն/<br>Գոյական.անձ և իր ցույց տվող գոյականներ | Գրել շարադրություն/Պատմ. զամբ.առաջ. 2/ |
| 59. | 1 | | Հայաստանի Հանրապետություն<br>« Տեղեկություններ » | Տեղեկություններ<br>Առաջ.3 /էջ35/ |
| 60. | 1 | 36 | Ն. Միքայելյան Մայր Հայաստան /ընթերցել/ | Առաջ.1,2/էջ37/ |
| 61. | 1 | | Խոսք և հաղորդ. | |
| 62. | 1 | | Ինքն /ընթ « Թորոս Ռոսլին» /էջ49-52 | Կարդալ,պատմել |
| 63. | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 2 | |
| 64. | 1 | | Գր. աշխ. | |
| | | | | |

<table>
<tr><td colspan="2">Թեմա</td><td colspan="2">Նպատակ</td><td>Վերջնարդյունք</td></tr>
<tr><td colspan="2">Հայրենի երկիր</td><td colspan="2">. Ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում: Տարբեր ժանրերի և ծավալների ստեղծագործությունները հասկանալով կարդալու կարողության տիրապետում<br>. Կարդացածի հիմնական մտքի առանձնացում: Տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողությունների զարգացում:</td><td>Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը: Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը: Հասկանալ տեքստի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև կապերը:<br>Սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը:<br>Պատմել կամ վերապատմել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը և վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, հերոսների վարքագծի վերաբերյալ:</td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2"></td><td colspan="3">Ստեղծագործության հերոսի նկարագրում: Դեպքերի նկարագրության տրամաբանական հաջորդականության և մտքի ճշտության պահպանում:<br>Իմանա հատուկ և հասարակ գոյականների ուղղագրությունը, գոյական թիվը և ձևային փոփոխությունները:</td></tr>
<tr><td colspan="3"></td></tr>
<tr><td>65.</td><td>1</td><td>36</td><td><u>Ն. Միքայելյան Մայր Հայաստան /ընթերցել/</u></td><td>Առաջ.3/էջ37/</td></tr>
<tr><td>66.</td><td>1</td><td>36</td><td>Ն. Միքայելյան Մայր Հայաստան<br>անգիր</td><td>Առաջ.4/էջ37</td></tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| 67. | 1 | 36 | Ն. Միքայելյան Մայր Հայաստան /վերլուծություն | Շարադրություն Առաջ2 /էջ 38/ |
| 68. | 1 | 38 | Հայաստանի Հանրապետության դրոշը | |
| 69. | 1 | 3-38 | Թեմայի ամփոփում«Ում նվիրեմ իմ սիրտը» | Ամրապնդում |
| 70. | 1 | | Ինքն/ընթ«Հովհաննես Այվազովսկի» /էջ 53-63 | Կարդալ,պատմել |
| 71. | 1 | | Խոսք և հաղորդակցում | |
| 72. | 1 | | Գր. աշխ | |
| 73. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 74. | 1 | 39-40 | Հայրենի երկիր<br>Պ. Խաչատրյան Հայաստան /կարդալ/ | Առաջ.1,2/էջ 40 |
| 75. | 1 | 39-40 | Պ. Խաչատրյան Հայաստան /անգիր/ | Առաջ.3/էջ41 |
| 76. | 1 | 41 | Հայաստանի Հանրապետության զինանշանը | Իմ երկիրը(շարադրություն) |
| 77. | 1 | 42 | Մ.Խերանյան Սասունցի Դավիթ 1 /կարդալ/ | Առաջ.1,2 էջ43 |
| 78. | 1 | 43 | Մ. Խերանյան Սասունցի Դավիթ 1 Գոյական/հատուկ և հասարակ/ | Կարդալ<br>Առաջ.3էջ43 |
| 79. | 1 | | Ինքն/ընթ« Մարտիրոս Սարյան » /էջ 64-72/ | Կարդալ,պատմել |
| 80. | 1 | | Խոսք և հաղորդակցում | |
| 81. | 1 | | Գր. աշխ | |
| 82. | 1 | | Գր. աշխ. | |
| 83. | 1 | 46 | Մ. Խերանյան Սասունցի Դավիթ 2 | Կարդալ<br>Առաջ 1,2,/էջ47/ |
| 84. | 1 | 46-47 | Մ. Խերանյան Սասունցի Դավիթ 2 /անգիր | Մեկ հատված սովորել անգիր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հատված/ | Առաջ 3,4/էջ47/ |
| 85. | 1 | 42-48 | Մ. Խերանյան Սասունցի Դավիթ<br>Սասնա ծռեր | Կարդալ,պատմել<br>Առաջ.4,5/էջ 48/ |
| 86. | 1 | 49 | Մատենադարան /կարդալ/ | |
| 87. | 1 | 50 | Մատենադարան / կարդալ / | Առաջ. 7 էջ 51 |
| 88. | 1 | | Ինքն /ընթ « Մինաս Ավետիսյան»/էջ73-78 | Կարդալ,պատմել |
| 89. | 1 | | Խ/հ. | |
| 90. | 1 | | Գր. աշխ | |
| 91. | 1 | | Գր. աշխ. | |
| 92. | 1 | | Մատենադարան | |
| 93. | 1 | 49-50 | Մատենադարան | Պատմել, առաջ. 3 էջ 51 |
| 94. | 1 | | Գործնական աշխատանք 1<br>« Մատենադարան» | |
| 95. | 1 | 53 | Վահագն Դավթյան Խաչքար /կարդալ/ | Առաջ. 1 էջ 54 |
| 96. | 1 | 53 | Վահագն Դավթյան Խաչքար /անգիր/ | Առաջ.2 էջ 54 |
| 97. | 1 | | Ինքն/ընթ«Լեոնարդո դա Վինչի »/էջ 79-88/ | Կարդալ,պատմել |
| 98. | 1 | | Խ/հ. | |
| 99. | 1 | | Գր. աշխ | |
| 100. | 1 | | Թեմատին գրավոր աշխատանք 3 | |
| 101. | 1 | 55 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն / 1 /կարդալ/ | Առաջ. 1 էջ 53 |
| 102. | 1 | 55-56 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն 1 /կարդալ/<br>Գոյականի թիվը | Առաջ. 2 էջ 56 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 103. | 1 | 55-56 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն 1 /պատմել/ | Առաջ. 3 էջ 56 |
| 104. | 1 | 58 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն 2 /կարդալ/ | Առաջ.1 էջ 59 |
| 105. | 1 | 58-59 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն 2 /կարդալ/ | Առաջ. 2 էջ 59 |
| 106. | 1 | | Ինքն/ընթ«Ճարտարապետություն ,քանդակագործություն«Վարպետաց Վարպետներ՝ Մանուել /էջ 90 | |
| 107. | 1 | | Խ/հ. | |
| 108. | 1 | | Գր. աշխ | |
| 109. | 1 | | Գր. աշխ. | |
| 110. | 1 | 58-59 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն 2 /կարդալ/ | Առաջ. 3 էջ 59 |
| 111. | 1 | 58-59 | Վարդգես Պետրոսյան Օշականյան հյուրընկալություն 2 /պատմել/ | Առաջ. 4 էջ 59 |
| 112. | 1 | 61 | Հենրիկ Արթենյան Արազածի աղբյուրները /կարդալ/ | Առաջ. 1 էջ 62 |
| 113. | 1 | 61 | Հենրիկ Արթենյան Արազածի աղբյուրները /անգիր/<br>Գոյականի –եր, -ներ վերջավորություններ | Առաջ. 2 էջ 62 |
| 114. | 1 | 63 | Արազած | |
| 115. | 1 | | Ինքն/ընթ« Տրդատ»/էջ 91 | Կարդալ,պատմե |
| 116. | 1 | | Խ/հ. | |
| 117. | 1 | | Գր. աշխ | |
| 118. | 1 | | Գր. աշխ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 119. | 1 | 64 | Էդմոնդո դե Ամիչիս  Փոքրիկ հայրենասեր 1 /կարդալլ/ | Առաջ. 1 էջ 65 |
| 120. | 1 | 65 | Էդմոնդո դե Ամիչիս  Փոքրիկ հայրենասեր 1 /կարդալ/<br>Հոմանիշ բառեր | Առաջ. 2 էջ 66 |
| | | | | |

| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք | |
|---|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Մեր քաղցրաբառ հայոց լեզուն<br>Թեմ. պլան-3 | .Ճիշտ, հասկանալով, արտահայտիչ ընթերցանություն՝ գրական արտասանության հիմնական կանոնների պահպանումով: Կարդացածի հիմնական մտքի առանձնացում:<br>. Տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողությունների զարգացում:<br>Բառերի, բառակապակցությունների և դարձվածքների գործառական կարողությունների զագացում: | . Իմանալ ածականը, ածական + գոյական կառուցվածքով բառակապակցությունները, բառը, բառերի որոշակի քանակի բացատրությունը համատեքստում:<br>. Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը:Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ: Ձևավորել իր ազգային պատկանելության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում, հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:<br>. Ձևավորել ընթերցասիրություն, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:<br>Ճանաչի կոչականը, իմանա կետադրությունը: |

| | Ժամ. | էջ | Դաս | |
|---|---|---|---|---|
| 121. | 1 | 64-65 | Էդմոնդո դե Ամիչիս Փորրիկ հայրենասեր 1 /պատմել/<br>Հոմանիշ բառեր | Առաջ. 5 էջ 66 |
| 122. | 1 | 67 | Էդմոնդո դե Ամիչիս Փորրիկ հայրենասեր 2 /կարդալ/<br>Գոյականի ձևային փոփոխություններ | Առաջ. 2 էջ 68 |
| 123. | 1 | 67-68 | Էդմոնդո դե Ամիչիս Փորրիկ հայրենասեր 2 /կարդալ/<br>Գոյականի ձևային փոփոխություններ | Առաջ. 6 էջ 69 |
| 124. | 1 | | Ինքն/ընթ « Մոմիկ ճարտարապետ /էջ 92 | Կարդալ,պատմել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 125. | 1 | | Խ/հ. | |
| 126. | 1 | | Գր. աշխ | |
| 127. | 1 | | Գր. աշխ. | |
| Ժամ. | | էջ | Դաս | |
| 128. | 1 | 67-68 | Էդմոնդո դե Ամիչիս Փոքրիկ հայրենասեր 2 /պատմել/<br>Գոյականի ձևային փոփոխություններ | |
| 129. | 1 | 70 | Հովհաննես Թումանյան Ա՜խ, ի՜նչ լավ են սարի վրա... /կարդալ/ | Առաջ. 5 էջ 71 |
| 130. | 1 | 70 | Հովհաննես Թումանյան Ա՛խ , ի՛նչ լավ են սարի վրա… / անգիր / | |
| 131. | 1 | 72-73 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 1 /կարդալ / | Առաջ. 2 էջ 73 |
| 132. | 1 | 73 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 1 /կարդալ/<br>Ածական | Առաջ. 4 էջ 73 |
| 133. | 1 | | Ինքն/ընթ« Ալեքսանդր Թամանյան/էջ 93-97 | Կարդալ,պատմել |
| 134. | 1 | | Խ/հ. | |
| 135. | 1 | | Գր. աշխ | |
| 136. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 137. | 1 | 72-73 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 1 /պատմել/ | |
| 138. | 1 | 75 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 2 /կարդալ / | Առաջ. 2 էջ 77 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 139. | 1 | 75-76 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 2 /կարդալ , պատմել/<br>Ածականի համեմատության աստիճանները | Առաջ. 3 էջ 77 |
| 140. | 1 | 76 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 2 /կարդալ պատմել / | Առաջ. 4 էջ 77 |
| 141. | 1 | 75-76 | Ավետիք Իսահակյան Ազգային երգը 2 /պատմել/<br>Ածականի համեմատության աստիճանները | |
| 142. | 1 | | Ինքն/ընթ « Երվանդ Քոչար » /էջ 98-102/ | Կարդալ,պատմել |
| 143. | 1 | | Խ/հ. | |
| 144. | 1 | | Գր. աշխ | |
| 145. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 146. | 1 | | Ամփոփում | |
| 147. | 1 | | Ամփոփում | |
| 148. | 1 | 79 | Բաբելոնի աշտարակը /կարդալ/ | Առաջ. 2 էջ 80 |
| 149. | 1 | 80 | Բաբելոնի աշտարակը /կարդալ/<br>Գոյականի ձևային փոփոխություններ | Առաջ. 3 էջ 80 |
| 150. | 1 | 79-80 | Բաբելոնի աշտարակը /պատմել/<br>Գոյականի ձևային փոփոխություններ | |
| 151. | 1 | | Ինքն/ընթ« Արա Շիրազ » /էջ 103-107 | Կարդալ,պատմել |
| 152. | 1 | | Խ/հ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 153. | 1 | | Գր. աշխ | |
| 154. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 155. | 1 | 82 | Ս. Մուրադյան Մայրենի լեզու /կարդալ/<br>Գոյականի եզակի և հոգնակի թիվ | Առաջ. 1 էջ 83 |
| 156. | 1 | 82 | Ս. Մուրադյան Մայրենի լեզու /անգիր/<br>Բառակապակցություն | Առաջ. 2 էջ 83 |
| 157. | 1 | 85 | Ս. Մկրտչյան Մեսրոպյան տառեր /կարդալ/<br>Գոյական-բայ | Առաջ. 2 էջ 85 |
| | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մարդու անունն ու գործը<br>Թեմ. պլան-4 | | ․ Առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառեր: Ընդհանուր հասկացություն թվականների մասին: Բառակապակցություն և դարձվածք: Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի, դրանց կետադրությունը: | ․ Իմանալ թվականը, թվական + գոյական կառուցվածքով բառակապակցությունները, բառը, բառերի որոշակի քանակի բացատրությունը համատեքստում:<br>․ Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը: Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ:<br>․ Տարբերել և կիրառել թվական+գոյական բառակապակցությունները:<br>Սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը: Անգիր արտասանել չափածո գրական ստեղծագործություններ: Բանավոր վերարտադրել տեքստի բովանդակությունը: Ըստ անհրաժեշտության կարդացած գրքի բովանդակությունը մտովի բաժանել իմաստային ամբողջական հատվածների, կազմել պլան: | |
| 158. | 1 | 85 | Ս. Մկրտչյան Մեսրոպյան տառեր /անգիր/<br>Նախադասություն. նախադասության անդամներ | |
| 159. | 1 | 87 | Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերը | |
| 160. | 1 | | Ինքն/ընթ « Միքելանջելո Բուոնարոտի /էջ 108-111/ | Կարդալ,պատմել |
| 161. | 1 | | Խ/հ. | |
| 162. | 1 | | Գր. աշխ | |
| 163. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 164. | 1 | 89 | Ս. Կապուտիկյան Հարստություն /կարդալ/ | Առաջ. 1 էջ 90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Գոյականի եզակի և հոգնակի թիվ | |
| 165. | 1 | 89 | Ս. Կապուտիկյան Հարստություն /կարդալ/<br>Ածանցավոր բառեր | Առաջ. 2 էջ 90 |
| 166. | 1 | 91 | Նշանների լեզուն /կարդալ/ | Առաջ. 1 էջ 92 |
| 167. | 1 | 91 | Նշանների լեզուն /կարդալ,պատմել/ | Առաջ. 2 էջ 92 |
| 168. | 1 | 93-94 | Կենդանիների լեզուն /կարդալ/ | Առաջ. 3 էջ 94 |
| 169. | 1 | | Ինքն/ընթ Կինո և թատրոն «Համո Բեկնազարյան » /էջ113-115/ | Կարդալ,պատմել |
| 170. | 1 | | Խ/հ. | |
| 171. | 1 | | Գր. աշխ | |
| 172. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 173. | 1 | 93-94 | Կենդանիների լեզուն /կարդալ/ | Առաջ. 5 էջ 94 |
| 174. | 1 | 97 | Հ. Թումանյան Բզեզի դպրոցը /կարդալ/<br>Հոմանիշներ | Առաջ. 1 էջ 100 |
| 175. | 1 | 98 | Հ. Թումանյան Բզեզի դպրոցը /կարդալ պատմել/<br>Կոչական | Առաջ. 2 էջ 100 |
| 176. | 1 | 97-99 | Հ. Թումանյան Բզեզի դպրոցը<br>Գործնական աշխատանք 2 | Առաջ. 3 էջ 100 |
| 177. | 1 | 102 | Թափառական երաժիշտները 1 /կարդալ/<br>Բառակապակցություն և դարձվածք | Առաջ. 1 էջ 105 |
| 178. | 1 | | Ինքն/ընթ« Միեր (Ֆրունզիկ ) Մկրտչյան» /էջ 116-119/ | Կարդալ,պատմել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 179. | 1 | | Խ/հ. | |
| 180. | 1 | | Գր. աշխ | |
| 181. | 1 | | Գր. աշխ. | |
| | Ժամ. | էջ | Դաս | |
| 182. | 1 | 103 | Թափառական երաժիշտները 1 /կարդալ/ Բառակապակցություն և դարձվածք | Առաջ.1 /Բառերի գանձ |
| 183. | 1 | 102-103 | Թափառական երաժիշտները 1 /կարդալ/ | Առաջ. 2 /էջ 105 Առաջ. 5 էջ 105 |
| 184. | 1 | 102-103 | Թափառական երաժիշտները 1 /պատմել/ | |
| 185. | 1 | 106 | Թափառական երաժիշտները 2 /կարդալ/ Բառակապակցություն և դարձվածք | Առաջ. 2 /էջ 109 / |
| 186. | 1 | 107 | Թափառական երաժիշտները 2 /կարդալ/ | Առաջ. 3 էջ 109 |
| 187. | 1 | 106-107 | Թափառական երաժիշտները 2 /պատմել/ | Պատմել, առաջ. 6 էջ 109 |
| 188. | 1 | | Ինքն/ընթ « Սոս Սարգսյան» /էջ 120-122/ | Կարդալ,պատմել |
| 189. | 1 | | Խ/հ. | |
| 190. | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 4 | |
| 191. | 1 | | Գր. աշխ. | |
| 192. | 1 | 111 | Վ. Այգեկցի Առյուծը, գայլը և աղվեսը /կարդալ/ | Կարդալ, առաջ. 1 էջ 112 |
| 193. | 1 | 111 | Վ. Այգեկցի Առյուծը, գայլը և աղվեսը /կարդալ/ ,պատմել | Պատմել, առաջ. 2 էջ 112 |
| 194. | 1 | 79-112 | Ամփոփում«Մեր քաղցրաբառ հայոց լեզուն» | Անցածի կրկնություն |
| 195. | 1 | 113 | Ռ. Մարուխյան Չորս խնձոր 1 /կարդալ/ Թվական | Կարդալ, առաջ. 1 էջ 114 |
| 196. | 1 | 113-114 | Ռ. Մարուխյան Չորս խնձոր 1 /կարդալ/ Թվական | Կարդալ, առաջ. 2 էջ 114 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 197. | 1 | | Ինքն/ընթ « Լեոնիդ Ենգիբարյանօ/123-128 | Կարդալ,պատմել |
| 198. | 1 | | Խ/հ. | |
| 199. | 1 | | Գր. աշխ | |
| 200. | 1 | | Գր. աշխ. | |
| 201. | 1 | 116 | Ռ. Մարուխյան Չորս խնձոր 2 /կարդալ/ | Կարդալ, առաջ. 1 էջ 117 |
| 202. | 1 | 117 | Ռ. Մարուխյան Չորս խնձոր 2 կարդալ/ | Կարդալ, առաջ.2 էջ 177 |
| 203. | 1 | 113-117 | Ռ. Մարուխյան Չորս խնձոր 1, 2 մասերը /պատմել/ | Պատմել |
| 204. | 1 | 119 | Ա. Դարբնի Ձեռքերը /կարդալ/<br>Բայ.բայի դեմքը և թիվը | Կարդալ, առաջ. 1 էջ 120 |
| 205. | 1 | 119 | Ա. Դարբնի Ձեռքերը /կարդալ/<br>Բայ.բայի դեմքը և թիվը | Կարդալ, առաջ. 2 էջ 120 |
| 206. | 1 | | Ինքն/ընթ « Չարլի Չապլին » էջ 130- 133 | Կարդալ,պատմել |
| 207. | 1 | | Խ/հ. | |
| 208. | 1 | | Գր. աշխ | |
| 209. | 1 | | Գր. աշխ. | |
| 210. | 1 | 122 | Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք /կարդալ/ | Կարդալ, առաջ. 1 էջ 123 |
| 211. | 1 | 122-123 | Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք /կարդալ, պատմել/ | Կարդալ ,պատմել, առաջ.2 էջ 123 |
| 212. | 1 | 125 | Մ. Կորյուն Սեխի թուփն ու ընկուզենին /կարդալ/ | Առաջ. 1 էջ 125 |
| 213. | 1 | 125 | Մ. Կորյուն Սեխի թուփն ու ընկուզենին /անգիր/ | Առաջ. 2 էջ 125 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 214. | 1 | 127 | Լ. դա Վինչի Դեղձենին /կարդալ/ | Առաջ. 2 էջ 128 |
| 215. | 1 | | Ինքն/ընթ « Հովհաննես Թումանյան » էջ 142-144 | Կարդալ,պատմել |
| 216. | 1 | | Խ/հ. | |
| 217. | 1 | | Գր. աշխ | |
| 218. | 1 | | Գր. աշխ. | |
| 219. | 1 | 127-128 | Լ. դա Վինչի Դեղձենին /կարդալ/ | Առաջ, 3 էջ 128 |
| 220. | 1 | 127-128 | Լ. դա Վինչի Դեղձենին /պատմել/ Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի | Կարդալ,պատմել, առաջ. 4 էջ 128 |
| 221. | 1 | 130 | Համո Սահյան Գետը /կարդալ/ | Առաջ. 3 էջ 131 |
| 222. | 1 | 130 | Համո Սահյան Գետը /անգիր / | Առաջ. 4 էջ 131 |
| 223. | 1 | 132 | Ա. Պարսամյան «Հրաշք վրձինը» | Կարդալ,պատմել, առաջ. 1 էջ 134 |
| 224. | 1 | | Ինքն/ընթ « Հովհաննես Թումանյան էջ 145-147 | Կարդալ,պատմել, առաջ. 2 էջ 134 |
| 225. | 1 | | Խ/հ. | |
| 226. | 1 | | Գր. աշխ | |
| 227. | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 5 | |
| 228. | 1 | 133-134 | Ա. Պարսամյան «Հրաշք վրձինը» | Կարդալ,պատմել |
| 229. | 1 | 132-134 | Ա. Պարսամյան «Հրաշք վրձինը»/պատմել/ | Կարդալ,պատմել |
| 230. | 1 | 136 | Գ. Գաբրիելյան «Տխրություն» /կարդալ/ | Առաջ. 4 էջ 137 |
| 231. | 1 | 136 | Գ. Գաբրիելյան «Տխրություն» /անգիր/ Իմ. օրատետրից ՝Արզելոց | Առաջ. 5 էջ 137 |
| 232. | 1 | 138 | Զորայր Խալափյան «Ծաղկուն պարտեզ» | Առաջ. 1 էջ 140 |
| 233. | 1 | | Ինքն/ընթ «Ղազարոս Աղայան» էջ 152-153 | Կարդալ,պատմել |
| 234. | 1 | | Խ/հ. | |
| 235. | 1 | | Գր. աշխ | |
| 236. | 1 | | Գր. աշխ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 237. | 1 | 139 | Զորայր Խալափյան «Ծաղկուն պարտեզ» | |
| 238. | 1 | 138-139 | Զորայր Խալափյան «Ծաղկուն պարտեզ» | |
| 239. | 1 | 141 | Ա. Պարսամյան «Կաթիլը | Առաջ. 1 էջ 141 |
| 240. | 1 | 141 | Ա. Պարսամյան «Կաթիլը | Առաջ. 2 էջ 141 |
| 241. | 1 | 113-142 | Ամփոփում«Մարդու անունն ու գործը» | |
| 242. | 1 | | Ի/ը« Ղազարոս Աղայան» էջ 154-159 | |
| 243. | 1 | | Խ/հ. | |
| 244. | 1 | | Գր. աշխ | |
| 245. | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 6 | |
| 246. | 1 | 143 | **Մանուկների մոլորակը**<br>Լ. Սարգսյան «Երգ ունեն» | Առաջ. 1 էջ 144 |
| 247. | 1 | 143 | Լ. Սարգսյան «Երգ ունեն» | Առաջ. 2 էջ 144 |
| 248. | 1 | 145-146 | Վիկտոր Դրագունսկի «Մանկության ընկերը 1 »/կարդալ / | Առաջ. 3 էջ 147 |
| 249. | 1 | 146-147 | Վիկտոր Դրագունսկի «Մանկության ընկերը 1 » / կարդալ / | Առաջ. 4 էջ 147 |
| 250. | 1 | 145-147 | Վիկտոր Դրագունսկի «Մանկության ընկերը 1 » / պատմել / | |
| 251. | 1 | | Ի/ը« « Վիլյամ Սարոյան» էջ 160-162 | Կարդալ,պատմել |
| 252. | 1 | | Խ/հ. | |
| 253. | 1 | | Գր. աշխ | |
| 254. | 1 | | Գր. աշխ. | |
| 255. | 1 | 149 | Վիկտոր Դրագունսկի «Մանկության ընկերը 2 »/կարդալ / | Առաջ. 1 էջ 151 |
| 256. | 1 | 150-151 | Վիկտոր Դրագունսկի «Մանկության ընկերը 2 » / կարդալ / | Առաջ. 2 էջ 151 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 257. | 1 | 149-151 | Վիկտոր Դրագունսկի «Մանկության ընկերը 2 » / պատմել / | Առաջ 5 էջ 151 |
| 258. | 1 | 152 | Յուրի Սահակյան « Քո ընկերոջ ենկերն եմ ես» | Առաջ. 1 էջ 152 |
| 259. | 1 | 152 | Յուրի Սահակյան « Քո ընկերոջ ենկերն եմ ես» | Առաջ. 2 էջ 152 |
| 260. | 1 | | Ի/ը «Ալեքսանդր Պուշկին» էջ 169-178 | Կարդալ,պատմել |
| 261. | 1 | | Խ/հ. | |
| 262. | 1 | | Գր. աշխ | |
| 263. | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 7 | |
| 264. | 1 | 154 | Վ. Նալբանդյան «Կամակոր Նոյը»1 | Կարդալ,պատմել, առաջ. 1 էջ 155 |
| 265. | 1 | 155 | Վ. Նալբանդյան «Կամակոր Նոյը » 1 | Կարդալ,պատմել, առաջ. 2 էջ 155 |
| 266. | 1 | 154-155 | Վ. Նալբանդյան «Կամակոր Նոյը » 1 | Կարդալ,պատմել, առաջ. 3 էջ 153 |
| 267. | 1 | 158 | Վ. Նալբանդյան «Կամակոր Նոյը » 2 | Կարդալ,պատմել, առաջ. 1 էջ 159 |
| 268. | 1 | 159 | Վ. Նալբանդյան «Կամակոր Նոյը » 2 | Կարդալ,պատմել, առաջ. 2 էջ 159 |
| 269. | 1 | | Ի/ը Հանս Քրիստիան Անդերսեն» էջ 179-182 | Կարդալ,պատմել |
| 270. | 1 | | Խ/հ. | |
| 271. | 1 | | Գր. աշխ | |
| 272. | 1 | | Գր. աշխ. | |
| 273. | 1 | 158-159 | Վ. Նալբանդյան «Կամակոր Նոյը » 2 | Պատմել, առաջ. 3 էջ 159 |
| 274. | 1 | 161 | Հ. Սեան «Տղաներն ու աղջիկները» | Անգիր, առաջ. 1 էջ 161 |
| 275. | 1 | 163 | ԷԴ. դե Ամիչիս «Հրաժեշտ դպրոցին» | կարդալ, պատմել, առաջ. 1 էջ 164 |
| 276. | 1 | 163-164 | ԷԴ. դե Ամիչիս «Հրաժեշտ դպրոցին» | կարդալ, պատմել, առաջ. 2 էջ 164 |
| 277. | 1 | 166 | Ս. Վահունի «Գլոբուսը»1 | Կարդալ, առաջ. 1 էջ 167 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Բացականչական նախադասություն | |
| 278 | 1 | | Ի/ը Հանս Քրիստիան Անդերսեն» էջ 183-190 | Կարդալ,պատմել |
| 279 | 1 | | Խ/հ. | |
| 280 | 1 | | Գր. աշխ | |
| 281 | 1 | | Գր. աշխ. | |
| 282 | 1 | 167 | Ս. Վահունի «Գլոբուսը»1<br>Բացականչական նախադասություն | Կարդալ,պատմել, առաջ. 2 էջ 168 |
| 283 | 1 | 170 | Ս. Վահունի «Գլոբուսը»2 | Կարդալ, առաջ. 1 էջ 171 |
| 284 | 1 | 170-171 | Ս. Վահունի «Գլոբուսը»2 | Կարդալ, առաջ. 2 էջ 171 |
| 285 | 1 | 166-178 | Ս. Վահունի «Գլոբուսը»1 2 | Պատմել |
| 286 | 1 | 173 | Յուրի Սահակյան «Իմ հարևան ճնճղուկն ու ես | Առաջ. 1 էջ 174 |
| 287 | 1 | | Ի/ը Հանս Քրիստիան Անդերսեն» 183-190 | Կարդալ,պատմել |
| 288 | 1 | | Խ/հ. | |
| 289 | 1 | | Գր. աշխ | |
| 290 | 1 | | Գր. աշխ. | |
| 291 | 1 | 173 | Յուրի Սահակյան «Իմ հարևան ճնճղուկն ու ես | Առաջ. 2 էջ 174 |
| 292 | 1 | 175 | Ե. Պետրոսյան «Դաշտային ծաղիկներ» | Կարդալ, առաջ. 1 էջ 176 |
| 293 | 1 | 175 | Ե. Պետրոսյան «Դաշտային ծաղիկներ» | Անգիր, առաջ. 2 էջ 176 |
| 294 | 1 | 175-177 | Ե. Պետրոսյան «Դաշտային ծաղիկներ» Իմ. օրատետրից Հայրենի բնաշխարհ | վերլուծություն |
| 295 | 1 | 143-175 | Թեմայի ամփոփում« Մանուկների մոլորակ » | Անցածի կրկնություն |
| 296 | 1 | | Ի/ը Անցած թեմաների կրկնություն | Կարդալ,պատմել |
| 297 | 1 | | Խ/հ. | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 298 | 1 | | Գր. աշխ | |
| 299 | 1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 8 | |
| 300 | 1 | | Թեմայի ամփոփում | ` |
| 301 | 1 | 178 | Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ | |
| 302 | 1 | 179 | Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ | |
| 303 | 1 | | Անցածի ամրապնդում | |
| 304 | 1 | | Թեմայի ամփոփում | |
| 305 | 1 | | Անցած թեմաների կրկնություն | |
| 306 | 1 | | Կրկնություն | |

## Թեմատիկ պլանավորում

Դաս – 1/1. Յոթ սրբություն (անգիր)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:
2. Ի՞նչ է սրբությունը:
3. Որո՞նք են յոթ սրբությունները:
4. Ո՞րն է ամենավեհ ու լուսե սրբությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.**

1. Իմանա,որ բանաստեղծության հեղինակը Սուրեն Մուրադյանն է:
2. Իմանա ,որ սրբությունը ամենանվիրականն ու թանկն է:
3. Իմանա , որ թանկ սրբություններն են՝ հողը, պատիվը, շինարար ոգին, հավատը, լեզուն, ընտանիքը, հայրենիքը:
4. Իմանա, որ ամենավեհ ու լուսե սրբությունը հայրենիքն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.**

1.Վերծանել խառնանագիրը և հատուկ անունները գրել մեծատառ.

ա.ուրենս ումրդանայ բ. քչնաղ հյարնեքի գ.նապիետա կիյա

2.Ընդգծել այն բառը ,որը սուրբ բառի հետ կարող է բառակապակցություն լինել.

հայրենիք , գիրք, պահարան, հող, հոգի, գրիչ, հեքիաթ, լեզու

3.Բառերն առանձնացնել ըստ համապատասխան սյունակների.

լեզու, հայրենիք, հավատ,հող,պատիվ,ոգի,շինարար,ընտանիք,մայր

| Միավանկ բառեր | երկվանկ բառեր | եռավանկ բառեր |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

4.Արտագրել ոտանավորը, յուրաքանչյուր տողի առաջին տառը գրել կանաչ գրիչով և կարդալ ստացված բառը:

Հայերը ուժեղ են հոգով,
Անվախ և հպարտ իրենց կամքի ուժով,
Յուրաքանչյուր հայ պայքարող է միշտ,
Ամեն ազգ չէ որ այսպես ուժ ունի:
Սիրտն է մեր առյուծի պես քաջ,
Տունն ու ընտանիք ամուր են միշտ,
Առաջ ենք գնում ,դարերով ապրում,
Նենգ թշնամուց ահ չենք զգում:

Հայաստան իմ սիրուն
Ապրում ես իմ սրտում,
Յուրաքանչյուրիս մի մասն ես դու,

Րոպե առ րոպե գեղեցկանում ես դու,

Երկինքդ է կապույտ,դաշտերդ կանաչ,

Նման ես մի մեծ բուրաստանի,

Իրոք որ չկա քեզ պես աննման

Քեզ շատ եմ սիրում երկիր Հայաստան:

Թեմատիկ պլանավորում

Դաս 2/1. Լավ ընկերը 1(ընթերցել)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր պատմություն պատմում:
2. Ովքե՞ր էին դարանակալել ժայռերի հետևում:
3. Ի՞նչ պատահեց ճամփորդի հետ:
4. Առաջին անգամ ո՞վ հանդիպեց անօգնական ճամփորդին:
5. Ի՞նչ արեց այդ մարդը ,երբ մոտեցավ անօգնական ճամփորդին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ պատմությունը պատմում էր Հիսուս քրիստոսը:
2. Իմանա,որ ժայռերի հետևում դարանակալել էին ավազակները:
3. Իմանա,որ ճամփորդին ծեծեցին և թալանեցին;
4. Իմանա, որ առաջին անգամ ճամփորդին հանդիպեց լավ հագնված մի անցորդ:
5. Իմանա ,որ անցորդը անօգնական թողեց և հեռացավ օգնություն խնդրողին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Արտագրել՝ լրացնելով ճիշտ տարբերակը.

Աստծու Որդին՝__________________________, աշխարհ եկավ՝ փրկելու մարդկությանը: ________________________, Հայր Աստծու կամքով մարդանալով, իր վրա վերցրեց ողջ մարդկության մեղքը, կրեց անարգանքներ ու չարչարանքներ: ____________________ իր աշակերտների և ժողովրդի հետ հաճախ է խոսել մարդու մեղավոր լինելու, ապաշխարելու և Աստծուն դառնալու ու ապավինելու անհրաժեշտության մասին:

/ Հիսուս Քրիստոսը, Փիլիպպոսը, Մատթեոսը /

2.Վանկերը ճիշտ միացնել և ստանալ բառեր.




3.Բնագրում գտնել տրված հատվածը և լրացնել բաց ողնված բառերը.

Կարող եք կռահել,թե ի՛նչ պատահեց.ավազակները ________________ նրա վրա ,_______________քսակը,________________նրան, նույնիսկ________________հագուստը և փախան:

4.Անտարբեր և ամայի բառերը միացնելով տրված համապատասխան բառին և ստանալ բառակապակցություն:

մարդ , հայացք, անցորդ, ճանապարհ, երեխա,փողոց, ճանապարհորդ,վայր,

5.Դասավորել խառնագիրը և ստանալ բառակապակցություններ.

շապտոր ացնրոդ ________________________________________

օնգություն կնչղոա________________________________________

գլխուր շջրել____________________________________________

ճնապրահըա շարնուկլեա________________________________

[Թեմատիկ պլանավորում](#)

Դաս 3/1. Լավ ընկերը 1(պատմել)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ ճանապարհով էր անցնում մարդը:

2.Ինչպիսի՞ն էին այն երկու անցորդները,որոնք չօգնեցին վիրավորին:

3.Ինչպե՞ս կվարվեիր ,եթե վիրավոր մարդը քո ճանապարհին հանդիպեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ Ճանապարհը ,որտեղով անցնում էր մարդը ոլորապտույտ էր ,ամայի,երկու կողմերում հսակայական ժայռեր էին:

2.Իմանա,որ անցորդներից մեկը լավ էր հագնված,մյուսը շտապում էր և երկուսն էլ չօգնեցին վիրավորին:

3.Իմանա,որ պետք է օգնության ձեռք մեկնել դրա կարիքն ունեցողին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Շարքերից ընտրել և կողք կողքի գրել հոմանիշ բառերը.

հսկայական անմարդաբնակ շքեղ ոլորապտույտ

ծուռումուռ ճոխ խոշոր ամայի

2. Ասել մեկ բառով.

օգնության ձեռք մեկնել__________________

հայացք գցել__________________________

անմարդաբնակ վայր_________________________

/նայել,աջակցել,ամայի/

3. Պատմել նկարի բովանդակությունը:



[Թեմատիկ պլանավորում]

Դաս 3-1/1Լավ ընկերը 2(ընթերցել)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ինչպիսի՞ վիճակում էր վիրավոր ճամփորդը:

2.Ո՞վ հանդիպեց վիրավոր անցորդին:

3.Ի՞նչ արեց օտարականը:

4.Ի՛նչ խոսքերով ավարտվեց պատմությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա,որ ճամփորդը ծարավ էր ու վերքերը ցավում էին:

2.Իմանա,որ վիրավորին հանդիպեց մի օտարական:

3.Իմանա,որ օտարականը վիրավորին դրեց ավանակի վրա,իսկ ինքը կողքով քայլելով նրան հասցրեց մոտակա իջևանատունը և խնդրեց տեր կազնել վիրավորին:

4.Իմանա,որ պատմվածքն ավարտվեց .<<Ընկերը նա է,ով քո սիրո և օգնության կարիքն ունի,ընկերը նա է,ով սիրում և օգնում է քեզ>>:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Տրված բառերը դարձնել բայ՝ ավելացնելով ել կամ ալ.

ցավ__________________ ծարավ ________________ տխուր ___________

2.Գտնել հականիշ բառերը.

| | |
|---|---|
| օտարական | չար |
| բարեսիրտ | յուրային |
| հիվանդ | մարդաշատ |
| ամայի | առողջ |

3.Առանձնացնել լավ և վատ բառերը.

համեստ, գոռոզ, անտարբեր, ընկերասեր, կեղծավոր, , հոգատար չար, անազնիվ, համբերատար, անկեղծ

լավ բառեր վատ բառեր

4.Աճման կարգով միացնել զույգ թվերը և գրել ստացված ասացվածքը.

20. են

16.վտանգի

22.ճանաչում

17.ընկերը

11.հիանում

12.Ընկերոջը

18.մեջ

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 4 /1 Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը (ընթերցել)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Տատիկն ինչի՞ էր նմանեցնում դատարկ սիրտը:

2.Հեղինակն ինչի՞ հետ էր համեմատում սիրտը:

3.Տղան իր սրտում ու՞մ տեղ տվեց:

4.Ու՞մ չկարողացավ տղան տեղավորել իր սրտի մեջ:

5.Արդյոք կարողացա՞վ հեղինակը սիրտն ամբողջությամբ լցնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա,որ տատիկը դատարկ սիրտը նմանեցնում էր դատարկ ծաղկամանի,որը կարող է ցավ պատճառել:

2. Իմանա,որ հեղինակը սիրտը համեմատում էր կոկիկ տնակի հետ:

3. Իմանա,որ տղան իր սրտում տեղավորեցմայրիկին, հայրիկին, քույրիկին, եղբորը, տատիկին, պապիկին, քեռուն , հորեղբորը, զինվորներին:

4. Իմանա,որ հեղինակն իր սրտում չկարողացավ տեղվորել հայրիկի հարուստ հորեղբորը:

5.Իմանա,որ հեղինակը կարողացավ իր սրտն ամբողջությամբ լցնել լավ ու բարի մարդկանցով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Տրված հատվածի ընդգծված բառերը վանկատել և առանձնացնել գաղտնավանկ ը ունեցող բառերը.

– Մարդու սիրտը չպետք է դատարկ մնա, – ասում է տատիկը, – եթե դատարկ մնա, դատարկ ծաղկամանի նման տգեղ կլինի և մարդուն ցավ կպատճառի:

գաղտնավանկ ը ունեցող բառեր՝ ______________________, ____________________________, ________________________________________, ________________________

2. Ընթերցել և մեկ նախադասությամբ պատասխանել հեղինակի հարցին:

Ճիշտն ասած՝ ախր, չգիտեմ՝ ինչպես ասեմ:Սիրտս ,որ մի փոքրիկ, սիրուն ու կոկիկ տնակի պես մաքուր է, մի այնպիսի մեկին նվիրեմ, որին շա՜տ-շա՜տ եմ սիրում,կամ չգիտեմ մեկին, որ շատ լավն է: Մեկին, որ իսկապես արժանի է իմ շատ փոքրիկ և մաքուր սրտի մեջ տնակ ունենալու: Ճիշտ եմ ասում, չէ՞:

______________________________________________________________________________

____________________________________________________________

3.Սրտիկների մեջ գրել նրանց անունները ում կցանկանաս տեղավորել սրտիդ մեջ:





4. Ընտրել ճիշտ տարբերակը ,թե ում մասին է խոսքը.

Բայց նա չտեղավորվեց:Ինչ արեցի, չտեղավորվեց…շատ խղճացի…բայց ի՞նչ անեմ, չտեղավորվեց, էլի, իմ մեղքը հո չի, իր մեղքն է: Այսինքն՝ ճիշտն ասած, երբ ինքն էլ դժվարությամբ, մի կերպ տեղավորվում էր սրտիս մեջ, փողերի հսկա սնդուկը դուրս էր մնում, նա էլ հնիհն դուրս էր վազում սրտիցս, որպեսզի վերցնի իր սնդուկը…

/քեռի, հորեղբայր, մորեղբայր ,հայրիկի հորեղբայր, մայիկի հորեղբայր/

5.Ընթերցել և ընդգծել հարցական նախադասությունը:

Երբ մեծանամ, գուցե հասկանամ, թե ինչու է այդպես, սակայն հիմա, մինչեւ այն պահը, երբ դեռ սրտիս մեջ տեղ կա, պետք է այդ տեղը նվիրեմ լավ ու բարի մարդկանց:

Սիրտը հենց դրա համար է, ճիշտ չէ

Թեմատիկ պլանավորում

Դաս 5/1. Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը (պատմել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր ուզում անել տղան իր սրտի հետ:

2. Ի՞նչ սկզբունքով էր հեղինակը մարդկանց տեղավորում իր սրտի մեջ:
3. Ի՞նչ եզրահանգման եկավ հեղինակը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ տղան ուզում էր իր մաքուր սրտի մեջ տեղավորել մարդկանց:
2. Իմանա,որ հեղինակը սկզբում իր սրտի մեջ տեղավորեց հարազատներին,իսկ հետո բարի ու լավ մարդկանց:
3. Իմանա,որ հեղինակը եզրակացրեց ,որ սիրտը լավ ու բարի մարդկանց նվիրելու համար է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել և վերարտադրել բնագրի հետևյալ հատվածը:
   Ահա, հենց այդ պատճառով էլ երկար ժամանակ է՝ մտածում եմ՝ այս փոքրիկ սիրտը ո՞ւմ նվիրեմ: Այսինքն՝ ո՞ւմ պետք է սրտիս մեջ տեղավորեմ, որ բոլորից լավը լինի:
2. Ընթերցել և վերարտադրել բնագրի հետևյալ հատվածը:

   Երկար մտածելուց հետո վճռեցի՝ սիրտս նվիրեմ մայրիկիս, Բայց, ո՜վ զարմանք, երբ նայեցի սրտիս, նկատեցի, որ կեսը դեռևս դատարկ էր մնացել… Դե, իհարկե, հենց սկզբից ես պիտի գլխի ընկնեի ու սիրտս երկուսին նվիրեի՝ հայրիկիս ու մայրիկիս: Այդպես էլ վարվեցի: Հետո, հետո գիտե՞ք՝ ի՞նչ եղավ: Այո, իհարկե, նայեցի ու տեսա՝ սրտիս մի մասում դեռևս դատարկ տեղ է մնացել… Անմիջապես վճռեցի սրտիս դատարկ մնացած անկյունը նվիրել մի քանի հոգու:

Մի քանի հոգու, ում շատ եմ սիրում:
Մեծ եղբորս, փոքրիկ քրոջս, պապիկին, տատիկին, իմ բարի քեռուն և ուրախ բնավորությամբ հորեղբորս էլ տեղավորեցի սրտիս մեջ:

3. Ընթերցել և վերարտադրել բնագրի հետևյալ հատվածը:

Երբ մեծանամ, գուցե հասկանամ, թե ինչու է այդպես, սակայն հիմա, մինչեւ այն պահը, երբ դեռ սրտիս մեջ տեղ կա, պետք է այդ տեղը նվիրեմ լավ ու բարի մարդկանց:
Սիրտը հենց դրա համար է, ճիշտ չէ՞:

Թեմատիկ պլանավորում

Դաս 6/1. Հայրս (ընթերցել)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ու՞ր էր տանում մայրը որդուն:
2. Ի՞նչ էր առել հայրը որդու համար:
3. Ինչպե՞ս էր հայրը զվարճացնում որդուն:
4. Ինչպիսի՞ն էր տղայի մանկությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ մայրը որդուն տանում էր Շիրակի դաշտեր հայրիկի մոտ:

2. Իմանա,որ հայրը որդու համար գառնուկ էր առել:
3. Իմանա,որ հայրը մի թևին առնում էր որդուն,մյուսին՝ գառնուկին:
4. Իմանա,որ տղայի մանկությունը անհոգ էր ,լուսե և խաղաղ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընդգծել տրված նախադասությունների մեջ փոխաբերական իմաստով բառակապակցությունը:

   Շիրակի դաշտերում առավոտն էր արթնանում:

   Հայրս մաքուր հոգի ունի:

2. Տրված բառերին ավելացնել համապատասխան վերջածանցները և որոշել,որն է ավելորդ. /իկ,ուկ/

   գառ____________________, ուլ___________________,

   ձուկ____________________, մուկ________________:

3. Գառնուկ և հայրիկ բառերից առանձնացնել ածանցները և դրանցով մեկական նոր բառ ազմել:

   __________________________________ __________________________________

4. Հատկանիշ և գործողություն ցույց տվող գրել տրված բառին համապատասխան:

   աշխույժ երեխա վազվզել

   __________________________ թիթեռ ________________________________

   __________________________ դաշտ _________________________________

   ___________________________ ծաղիկ ________________________________

Թեմատիկ պլանավորում

Դաս 7/1. Հայրս (անգիր)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որտե՞ղ էր տղայի հայրը։

2.Ու՞մ հետ էր խաղում տղան։

3.Ե՞րբ էր քնում տղան։

4.Ովքե՞ր էին համբուրում տղային։

5.Ինչպես էր անցնում տղայի մանկությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ տղայի հայրը Շիրակի դաշտերում էր։
2. Իմանա,որ տղան խաղում էր գառնուկի և հայրիկի հետ։
3. Իմանա,որ տղան քնում էր,երբ հոգնում էր։
4. Իմանա,որ տղային քնած ժամանակ համբուրում էին հայրն ու մայրը։
5. Իմանա,որ տղան թիթեռի պես թռվռուն,ծաղկի պես սիրուն ու անհոգ մանկություն էր ապրում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված քառատողում ընդգծել հատուկ անունը և մեկ տառ փոխելով ստանալ նոր անուն։

   Երբ դաշտերում Շիրակի

   Առավոտն էր արթնանում,

   Մայրս ամեն կիրակի

   Ինձ մեր բոստանն էր տանում։

2. Գրել նշված բառերի հնչյունների և տառերի քանակը.

   Երբ հայրիկս մեզ բռնում,

Ինձ մի թևին էր առնում,

Մյուս թևին՝ գառնուկիս,

Կյանքս երազ էր դառնում:

3. Լրացնել բաց թողնված բառերը.

Արածում էր ________________

Եվ դառնում էր ինձ________________,

Երբ՝ ես________________մանուկս,

Քնում էի________________տակ:

/պահակ ,գառնուկս, կաղնու ,հոգնած/

4. Շարունակել << հարազատ>> բառերի շարքը.

մայրիկ, հայրիկ, …

5. Գրել տրված բառերի հոգնակին:

թիթեռ________________ ծաղիկ________________________

գառ____________________ խոտ_________________________

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 8/1. Մոր ժպիտը (ընթերցել)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. ՈՒ՞մ ժպիտն է նկարագրում բանաստեղծը։
2. Մայրական ժպիտն ինչերի՞ հետ է համեմատվում։
3. Ինչն՞ է հավետ ուղեկցում բանաստեղծին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.**

1. Իմանա,որ բանաստեղծը նկարագրում է մոր ժպիտը։
2. Իմանա,որ բանաստեղծը մոր ժպիտը համեմատում է աղավնու փետուրի,արևի,լույսի հետ։
3. Իմանա,որ բանաստեղծին հավետ ուղեկցում է մոր ժպիտն ու երգը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.**

1. Արտագրել՝ լրացնելով բաց թողնված բառը.

    Առավոտվա լույսի շողը,

    Վառ արևն ու առավոտը

    Ինձ է բերում իմ________________,

    Երբ պարզելով նուրբ ձեռքերը,

    Ինձ առնում է իր ջերմ գիրկը։

    / մայրիկը, ծաղիկը, շնիկը/

2. Նկարների անունները տեղադրել նախադասությունների բաց թողնված համապատասխան տեղը։

  

ա.Երկնքում ճախրում է ճերմակ________________________:

բ.Մի ակնթարթում թուխ ամպը փակեց ջերմ______________________:

գ.Մութ սենյակում պատուհանից ներս թափանցեց______________________:

3. Կազմել բառակապակցություններ և ընդգծել այն բառի տակ,որը չի ստացվում.

ժպիտ

- լուսավոր
- կծու
- քաղցր

արև

- ոսկեշող
- շղթայաձև
- գնդաձև

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 9/1. Մոր ժպիտը (անգիր)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն է մայրական ժպիտը։
2. Ի՞նչ ես զգում,երբ մայրիկդ ժպտում է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ մայրական ժպիտը լինում է քնքուշ,լուռ,փափուկ,աստղալից,խոր,տաք,լուսավոր։
2. Իմանա,որ երբ մայրիկը ժպտում է երաեխան բերկրանք ու հանգստություն է զգում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Դուրս գրել նշված բառերը և գրել համապատասխան հարցերը.

Մայրական ժպիտ, դու քնքուշ ու լուռ
Եվ փափուկ, ինչպես աղավնու փետուր,
Դու երկնքի պես աստղալից ու խոր
Եվ արևի պես տաք ու լուսավոր։

2.Արտագրել՝ լրացնելով բաց թողնված տառերը։

Մայրս, ինձ համար ամենից թան. մարդն է աշխարհում։ Նա ինձ տվել է ամենից կար.որը՝ կյանք։ Նա է ինձ մեծացրել, ինձ դաստիարակել, ինձ ջերմացրել և գուր.ուրել։ Նա, բացի իմ մայրը լինելուց, նաև իմ լավագույն ընկերն է։ Ես, միշտ նրա հետ խոսելով ու խելացի խորհուր.ներ ստանալով, ճիշտ ճանապարհից երբեք չեմ

շեղվում: Նա ինձ օ.նում է ամեն հարցում, ամեն խն.իր մենք միասին ենք լուծում: Ես իմ կյանքը առանց նրա պարզապես չեմ պատկերացնում:

Թեմատիկ պլանավորում

Դաս 10/1. Մոր նամակը (ընթերցել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր նամակ գրել որդուն:
2. Մայրն ինչպես է բնութագրում հորը:
3. Մայրն ի՞նչ էր խրատում որդուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ մայրն էր նամակ գրել:
2. Իմանա,որ մայրը հայրիկին բնութագրում է որպես իսկական ընկեր:
3. Իմանա,որ մայրը խրատում էր,որ որդին հորը չպատասխանի,ներողություն խնդրի վատ պահվածքի համար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Դասավորել խառնագիրը և գրել հանելուկի պատասխանը:

   Խոսում է նա, լեզու չունի,

   Շրջում է նա, ոտքեր չունի,

   Բայց մտնում է ամեն մի տուն,

   Ուրախ լուրեր բերում մարդուն: /մանկա/

2. Իմաստախոսությունից դուրս գրել երեք բառ,որոնք ունեն նույն վերջածանցը:

   Ծնողի խստությունը բուժիչ դեղ է.նրա մեջ ավելի շատ քաղցրություն կա,քան դառնություն:

3. Արտագրել՝ դուրս գրելով նշված տառերը և գրել ստացված բառը:

Գնա', տղա'ս, գնա' հորդ մոտ, նա կողքի սենյակում նստած աշխատում է : Ոտքերիդ ծայրերի վրա մոտեցիր նրան, որպեսզի չլսի ներս մտնելուդ ձայնը, գլուխդ դի'ր նրա ծնկներին ու ներողությո'ւն խնդրիր:

Թեմատիկ պլանավորում

Դաս 11/1. Մոր նամակը (պատմել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչու էր մայրը նամակ գրել որդուն:
2. Մայրը նամակում ի՞նչ էր գրել հոր մասին:
3. Ինչպե՞ս էր մայրը գնահատում տղայի արարքը:
4. Ի՞նչ էր առաջարկում մայրը որդուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ մայրը որդուն նամակ էր գրել,քանի որ բարկացած էր նրա արարքի համար:
2. Իմանա,որ մայրը նամակում հոր մասին գրել էր,որ նա որդու ամենալավ ընկերն է և ,եթե բարկանում է,ապա որդու բարին կամենալով է դա անում:
3. Իմանա,որ մայրը տղայի արարքը երախտամոռություն էր համարում:
4. Իմանա,որ մայրն առաջարկում էր որդին ներողություն խնդրի հորից և այլևս նման արարք չկատարի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել նշված բառերի հոմանիշները:

    Ես համոզված եմ, որ քո ընկերները երբեք այնպես չեն պատասխանի իրենց հորը, ինչպես դու՝ այսօր երեկոյան:

    Էնրի'կո, ինպե՞ս կարողացար այդ անել:

    Դու պետք է խոստանաս ինձ , որ այդ բանը երբեք չի կրկնվի:

Ամեն անգամ, երբ ի պատասխան հորդ արած դիտողության, մի կոպիտ բառ է ուզում դուրս թռչել քո բերանից, խորհի՛ր այն մասին, որ մի օր զղջալու ես դրա համար :

/նկատողություն, վստահ, մտածել, կոշտ/

2. Բաց թողնված տեղերում լրացնել համապատասխան բառակապակցությունը. Ցավ պատճառել, մտերմությունը փնտրել, սիրտը ծանրացած, մոռացության տալ:

*Երբ մեկը մի բանից ճնշված կամ նեղված է լինում,ասում են ____________________է:

*Որևէ մեկին ______________________________ նշանակում է <<վշտացնել>>:

*Երբ որևէ մեկը ձգտում է որևէ բան չհիշել ,ասում են՝ ուզում է ______________________________:

*Որևէ մեկի______________________________նշանակում է <<ձգտել որևէ մեկի հետ բարեկամանալու,ընկերանալու>>:

3. Գրել նշված բառերի հականիշները:

Մտածի՛ր, թե ինչպիսի ցավ ես պատճառում նրան, երբ փոխադարձ սիրո փոխարեն նա քո մեջ տեսնում է անտարբերություն ու կոպտություն:

Այլևս նման սոսկալի երախտամոռություն ցույց չտաս, որդի՛ս:

/ուշադրություն, փափկություն, երախտագիտություն/

4.Բնագրում ընթերցել և վերարտադրել մոր առաջարկը:

Գնա՛, տղա՛ս, գնա՛ հորդ մոտ, նա կողքի սենյակում նստած աշխատում է : Ոտքերիդ ծայրերի վրա մոտեցիր նրան, որպեսզի չլսի ներս մտնելուդ ձայնը, գլուխդ դի՛ր նրա ծնկներին ու ներողությո՛ւն խնդրիր:

Քո մայր

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 12/1. Տղայիս (ընթերցել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:
2. Ի՞նչը դուր չէր գալիս մորը:
3. Ի՞նչ լավ արարքներ էր կատարում որդին:
4. Ի՞նչ էր խրատում մայրը որդուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ բանաստեղծության հեղինակը Սիլվա Կապուտիկյանն է:
2. Իմանա,որ մորը դու չէր գալիս,երբ որդին խաղում էր տատիկի հոգու հետ,շատ գնդակ է խաղում,քիչ սովորում,անհանգստացնում է հարևանին:
3. Իմանա,որ որդին խնամքով ծածկում է քնած տատիկին,հասկանում է մոր հոգեվիճակը, օգնում է թույլերին:
4. Իմանա,որ մայրը խրատում է ,որ որդին կյանքում լինի լավ մարդ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ՈԻ՞մ նկարն է.ներկել ճիշտ տարբերակը.



Շուշանիկ Կուրղինյան

Լուսինե Զաքարյան

Սիլվա Կապուտիկյան

2. Փոխաբերական իմաստով գրված բառակապակցությունների թվերը գրել առաջին պարկի մեջ,ուղիղ իմաստով գրված բառակապակցությունները երկրորդ պարկի մեջ.

1.խոսուն հայացք,2. պայծառ աստղ, 3.ամոթխած աղջիկ,4. մաքուր սիրտ, 5.ամոթխած լուսին, 6.անթարթ հայացք,7. մաքուր ջուր, 8.պայծառ դեմք





3. Լրացնել բաց թողնված բայերը:

Տղան խնամքով________________________________քնած տատիկին:

Տղան______________________մայրիկի հոգեվիճակը:

Տղան_________________________թույլերին:

/հասկանում էր,ծածկում էր,օգնում էր/

4. Բաց թողնված տեղերում տեղադրել բերում, , աշխարհում ,մնա,նա բառերը:

Որդի՛ս,դու բարի,միշտ բարի____________________,

Միշտ բարին շաղ տուր դու այս__________________,

Ծով չարի մեջ էլ չի չքանա______________________,

Ով թեկուզ մի շիթ բարիք է_____________________:

Թեմատիկ պլանավորում

Դաս 13/1. Տղայիս(անգիր):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս էր տղան սովորում դպրոցում:
2. Որդու ո՞ր արարքներն են ուրախացնում մորը:
3. Ո՞րն է բանաստեղծության գլխավոր միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ տղան դպրոցում գերազանց չէր սովորում:
2. Իմանա որ, մայրը ուրախանում էր,երբ տղան խնամքով ծածկում էր թախտին ննջած տատին,հոգեպես կիսում էր մոր վիշտը,միրգ էր տալիս դռնապանի տղային,օգնում էր թույլերին:
3. Իմանա,որ մարդ պետք է փայլի հոգով ու մարդ մնա կյանքում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տեղադրել քառատողի օժանդակ բայերը:

Դու_սովորում գերազանց , տղա՛ս,
Գովասանագրեր դու տուն______բերում,
Եվ ծնողական ձեր ժողովներում
Բարի նախանձով_____նայում վրաս:
/չես, չեն/

2. Ընդգծել նախադասության ինչպե՞ս հարցին պատասխանող բառը:

Թոռնիկը խնամքով ծածկում է թախտին ննջած տատիկին:

3. Առանձնացնել բառերը և գրել իմաստախոսությունը:

Գիտելիքներըմարդունկշիռենտալիս,իսկարարքներըփայլ:

[Թեմատիկ պլանավորում](#)

Դաս 14/1. Թագավորն ու հողագործը (ընթերցել)։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ էր տնկում ծերունին։
2. Ի՞նչ հարցրեց թագավորը ծերունուն։
3. Ի՞նչ պատասխանեց ծերունին թագավորին։
4. Ինչպե՞ս գնահատեց թագավորը ծերունու պատասխանը։
5. Ծերունու համար ինչ՞ն էր ամենակարևոր գանձը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ ծերունին ընկուզենի էր տնկում։
2. Իմանա,որ թագավորը ծերունուն հարցրեց թե ինչու՞ է այդքան չարչարվում,եթե չպետք է վայելի պտուղները։
3. Իմանա,որ ծերունին պատասխանեց,որ հողագործի գանձերը ծառն ու այգին է և նա պետք է ժառանգություն թողնի իր ժառանգներին։
4. Իմանա,որ թագավորը ծերունուն խելացի խոսքի համար պարգևատրեց տասը ոսկով։
5. Իմանա,որ ծերունու համար ամենակարևոր գանձը իր այգին ու ծառերն են։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ածանցը միացնել արմատին և գրել թե ինչ ծառ է պատկերված։,թե ի՞նչ պտուղ է պատկերված.

ընկույզ + ենի =________________________________

բալ + ենի =________________________________

սալոր + ենի=________________________________

նուռ + ենի=________________________________

   

2. Ընտրել նշված բառերի հոմանիշները.

   __Բարի՛ հայրիկ, ի՞նչն է քեզ ստիպում այդպես չարչարվել ու քրտինք թափել: Չէ՞ որ ընկուզենին շատ ուշ է պտուղներ տալիս, և դու դժվար թե պտուղները վայելես: /պարտադրել,զթասիրտ,տանջվել/

3. Բառերը դնել համապատասխան իմասի դիմաց.

   Ա. անվերջ,չվերջացող,չսպառվող `________________________________

   Բ. սանձը քաշել,իրեն ենթարկել,զսպել `________________________________

   Գ. Շատ ծերացած,ծեր `

________________________________________________

/անսպառ,սանձահարել,զառամյալ/

4. Պատկերները դասավորել ըստ նվազման կարգի և գրել ստացված առածը:










5. Ընթերցել ծերունու վերջին խոսքը և մեկնաբանել յուրովի:

   __Ախր սա ինձ բարիք տվեց ոչ թե հինգ կամ տասը տարի հետո, այլ հենց հիմա,_ պատասխանեց ծերունին:

Թեմատիկ պլանավորում

Դաս 15/1. Թագավորն ու հողագործը (պատմել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թագավորն ինչու գովեց ծերունուն և տասը ոսկի տվեց նրան:
2. Ծերունին ի՞նչն էր համարում ամենակարևոր զանձը;
3. Ինչպիսի՞ն էր թագավորը:
4. Ինչպիսի՞ն էր ծերունին:
5. Ո՞րն է հեքիաթի գլխավոր միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ թագավորը ծերունուն գովեց իր իմաստուն խոսքի համար:
2. Իմանա,որ ծերունու համար ամենակարևոր զանձը աշխատանքն է, իր այգին ու ծառը:
3. Իմանա,որ թագավորը հպարտ, հետաքրքրասեր, առատաձեռն, հարգալից էր:
4. Իմանա,որ աշխատասեր, զառամյալ, երախտապարտ,իմաստուն էր:
5. **5.** Իմանա ,որ աշխատանքն ու աշխատասիրությունն է ամեն բարիքի հիմքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել նշված հատվածը և գրել նշված բառերի հականիշները:

   __Տե՛ր արքա,_ ասաց ծերունին, եթե քո թագավոր պապը քեզ ժառանգություն չթողներ ոսկով ու ակնեղենով լի գանձարան, կալվածքներ, զենքեր ու զինանոցներ, դու ինչպես կարող էիր կառավարել քո ժողովրդին և դիմադրել քո թշնամիներին: Հայրենի ծառն ու այգին էլ հողագործի գանձերն են: Մեր պապերը ծառեր են տնկել, որոնց պտուղը մենք վայելում ենք, մենք էլ նույնը պիտի անենք մեր զավակների ու թոռների համար:

__Կեցցես, իմաստուն ծերուկ,_ասաց թագավորը և վեզիրին հրամայեց, որ գեղջուկին պարգևի տասը ոսկի:

/ հնազանդվել,երիտասարդ,անխելք,բարեկամ/

2. Ընթերցել և նշել,թե քանի նախադասություն կա:

_Ահա և լիովին ստացա իմ վարձը,_ասաց ծերունին:_Թո՛ղ օրհնյալ լինի իմ փոքրիկ տունկը, որ մեկ օրում երկու անգամ առատ բերք պարգևեց ինձ:

3. Տրված բառերից ընտրել թագավորին բնութագրող բառերը:

Հպարտ, ինքնահավան, հետաքրքրասեր, խելացի, իմաստուն, առատաձեռն, բարի, հարգալից:



4. Տրված բառերից ընտրիր ծերունուն բնութագրող բառերը:

Աշխատասեր, զառամյալ, անքաղաքավարի, հարգալից, ծույլ, երախտապարտ:



5. Դարձվածքը գծով միացնել համապատասխան բացատրությանը:

❖ Քրտինք թափել — ուտել

❖ Անուշ անել — ուրախանալ

- Աշխարհով մեկ լինել                    շատ աշխատել

Բնագրում ընթերցել  այդ դարձվածքներին համապատասխան տողերը:

Դաս 16/1. Պապը (ընթերցել)։ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գործեր էր կատարել պապը։
2. Ինչու՞ էր պապը ամոթից շիկնել։
3. Որտե՞ղ էր ապրում պապը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ պապը շիվեր է տնկել,ծիեր է պայտել,այգին է ջրել,վարել է,ցանել է։
2. Իմանա,որ պապը ամաչում էր,որովհետև չէր կարողանում աշխատել։
3. Իմանա,որ պապը ապրում էր գյուղում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրություններին համապատասխան բառերը գրել իրենց տեղերում։

   վարել, հնձել, հերկել, ոռոգել, ցանել, ջրել

   - Գութանով հողը ճեղքել,փխրեցնել,շրջել________________
   - Հողը՝ արտը,այգին ջրել________________
   - Գերանդիով կամ մանգաղով ցորենը կամ խոտը կտրել,քաղել________________
   - Սերմերը շաղ տալ հողի մեջ________________
2. Աշխատանք բառի հետ ընտրել հատկանիշ ցույց տվող բառերը և կազմել բառակապակցություն։

   հետաքրքիր, տուն, բարդ, կատարել, սիրելի, սիրել
3. Մի քանի նախադասությամբ ներկայացնել նկարի բովանդակությունը։



[Թեմատիկ պլանավորում]

Դաս 17/1. Պապը (անգիր):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ն էր պապը:
2. Ինչպիսի՞ն է գյուղական կյանքը:
3. Ո՞րն էր բանաստեղծության գլխավոր միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ պապը աշխատասեր էր:
2. Իմանա,որ գյուղական կյանքը դժվար է:
3. Իմանա,որ բանստեղծության գլխավոր միքն այն . որ պետք է սիրել աշխատանքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել տրված հատվածը և ընգծել գործողություն ցույց տվող բառերը:

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը:
Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է
Եվ բոլոր կամերը

Մեն-մենակ քարել է:

Ջրել է իր այգին,

Ու մարգը բահել է,

Եվ արդար քրտինքով

Իր տունը պահել է:

Իմ պապը վարել է,

Իմ պապը ցանել է,

Իսկ հնձի ժամանակ

Ձեռքի մեջ մանգաղի

Դաստակը ցավել է:

2. Նկարագրել ի՞նչ աշխատանք են կատարում նկարում պատկերված մարդիկ:

Բոլոր գյուղի մարդիկ շատ տանջվող, չարչարվող, աշխատասեր և աշխույժ մարդիկ են և սիրում են իրենց հողը և գործը:



3. Տրված բառերը տեղադրել համապատասխան տեղերում.

այգի, ծառ, խնձորենի,

Բակում՝ պապիկիս տնկած_____________մոտ,

Արդեն իմ տնկած________________է մեծանում:

Պապս սիրում էր ամեն առավոտ

Երկար աշխատել մեր փոքրիկ___________________:

Հիմա պապիկիս մեծ ________________________

Իր խիտ ճյուղերն է քամուց օրորում,

Ասես շրշում էնա մեր ականջին.

<<Պապն______________________ու հողն այս շատ է սիրում>>:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 18/1. Շնիկը (ընթերցել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ էր ծնվել և ապրում շնիկը:
2. Ինրպիսի՞ կյանքով էր ապրում շնիկը:
3. Ի՞նչ գտավ շնիկը:
4. Ինչպե՞ս և ինչու՞ փոխվեց նրա կյանքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ շնիկը ծնվել և ապրում էր նեղ ու կեղտոտ փողոցում:
2. Իմանա,որ շնիկի կյանքը դժվար էր,կեր չէր կարողանում գտնել, մեծ ու ուժեղ շները նեղում էին նրան:
3. Իմանա,որ շնիկը ակնոց գտավ:
4. Իմանա,որ շնիկի կյանքը փոխվեց,որովհետև նա ընկեր ունեցավ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գուշակել հանելուկի պատասխանը:
   - Հավատարիմ է մարդուն,
     Հսկում է նա սահման ու տուն:/____________/
   - Շատ նման է նա գայլի,
     Բայց գայլի հետ չի քայլի,
     Հավատարիմ ու արի
     Բարեկամն է մեր բարի:/________________/
2. Բնագրից գրել այն տողերը,որոնք համապատասխանում են նկարին:



3. Գուշակել հանելուկի պատասխանը:

   <<-Ի՞նչ տարօրինակ է.ամեն ինչ մեծ ու գեղեցիկ է երևում>>,- մտածեց շնիկը:

   Երկու փոքրիկ պատուհան,

   Մարդու աչքի օգնական: /__________/

4. Գտնել համապատասխան զույգը:

   Ա.փրկարար

   Բ. տնային

   Գ.որսաշուն

   Դ. ոստիկանական

   Ե. սահմանապահ

   - պաշտպանում են սահմանները
   - փրկում են մարդկանց
   - պաշտշանում են տունը
   - գտնում են հանցագործներին
   - ուղեկցում են որսորդներին

Դաս 19/1. Շնիկը (պատմել): [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս էր ապրում շնիկը:
2. Ու՞մ ակնոցն էր գտել շնիկը:
3. Ին՞չ որոշում կայացրեց երաժիշտը:
4. Ո՞րն էր պատմվածքի հիմնական միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա,որ շնիկը մենակ էր և դժվար էր կյանքն իր համար:
2. Իմանա,որ շնիկը գտել էր երաժիշտի ակնոցը:
3. Իմանա,որ երաժիշտը որոշեց շնիկին իր հետ տուն տանել:
4. Իմանա,որ առանց ընկեր կյանքը տխուր է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել տրված հատվածը և դուրս գրել երեք հոգնակի թվով գոյականներ:

   Ամեն երեկո շնիկը թափառում էր հին ու մռայլ փողոցներում ու նրբանցքներում, մտնում այգիներն ու պարտեզները:Մարդիկ նայում էին ու լուռ անցնում:Ոչ մեկը չէր օգնում կամ ուտելու որևէ բան տալիս:Մութն ընկնելուն պես թափառական շնիկը մտնում էր իր ստվարաթղթե տնակին ու քնում:Արևը ծագելուն պես ամեն ինչ սկսվում էր նորից:

2. Ընթերցել տրված հատվածը և դուրս գրել երեք գործողություն ցույց տվող բառ:

Ակնոցի հետևից երկու խոշոր աչքեր նայում էին լողավազանում չարչարվող ձկներին:Նրանք,պատեպատ զարկվելով,ուզում էին ազատվել քարե ավազանի ճանկերից:

Ուրախացած շնիկը քայլում էր,երբ փեղոցի մի անկյունից սրինգի հնչյուններ լսեց:Շնիկը դանդաղ մոտեցավ:

3. Ընթերցել տրված հատվածը և դուրս գրել երեք հատկանիշ ցույց տվող բառեր:

Երաժիշտը լսեց նրան,ապա ասաց.

-Լսի՛ր, փոքրի՛կ, եթե դու մենակ ես աշխարհում և տխուր ես, արի ընկերանանք:Ընկերությունը լավ բան է.ես հավատացած եմ, որ ընկերոջ հետ աշխարհը կսիրես առանց ակնոցի էլ:

Շնիկը մտածեց, հետո նայեց ծեր երաժիշտին.

-Դե ինչ, վերցրու՛ ակնոցդ,-ասաց ու դժվարությամբ բաժանվեց ակնոցից:

4. Արտագրել տրված հատվածը՝ գրելով նշված բառերի հոմանիշները:

Այդ օրվանից շնիկը տխուր չէր,ապրում էր երջանիկ,որովհետև էլ մենակ չէր,գտել էր իր մեծ բարեկամին ու ընկերոջը,որը սիրեց ու գուրգուրեց նրան:

/բախտավոր, թախծոտ, փայփայեց, հարազատ/

Դաս 20/1. Ծառի խնդրանքը (ընթերցել) [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը։
2. Ի՞նչ էր խնդրում ծառը։
3. Ի՞նչու են անհրաժեշտ ծառերը ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իման,որ բանաստեղծության հեղինակն է Պատվական Խաչատրյանը։
2. Իմանա,որ ծառը խնդրում էր չկոտրեն իր ճյուղերը։
3. Իմանա,որ ծառերն անհրաժեշտ են թթվածնի,գեղեցկության,հով ու զովի համար։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նախադասություններում ընդգծել հատուկ անունները և գտնել,թե նկարում որ մանկագիրն է։
    - Դպրոցի ամենախելացի աշակերտը Պատվականն էր։
    - Ընկեր Խաչատրյանը շատ էր սիրում իր աշակերտներին։



2. Բանաստեղծությունից արտագրել այն քառատողը, որը համապատասխանում է նկարին։



3. Գտնել և համապատասխանեցնել յուրաքանչյուր հարցի պատասխանը:
   - ✓ Անտառները բույսերի և կենդանիների համար ի՞նչ են հանդիսանում:
   - ✓ Ինչպե՞ս է անտառը օգնում ջրի հավասարակշռության պահպանմանը:
   - ✓ Ինչու՞ են անտառները համարվում մոլորակի թոքերը:
   - ✓ Ո՞ր անտառներն են պաշտպանում հողերը ողողումներից:
   - ✓ Ի՞նչով են ապահովում անտառները մարդուն:

- Անտառները պարզապես ծառեր չեն, միլիոնավոր բույսերի և կենդանիների բնակատեղի են:

- Անտառները համարվում եմ մեր մոլորակի թոքերը, քանի որ կանաչ բույսերը կլանում են ածխաթթու գազը և արտազատում թթվածին:

- Դանդաղեցնելով ձյան հալոցքը՝ անտառները թուլացնում են գետերի վարարումը, օգնում ջրի քանակության հավասարակշռության պահպանմանը:

- Հողերը ողողումից պաշտպանելու համար հատկապես կարևոր են մեծ թեքություններում գտնվող անտառները:

- Բացի այդ, անտառները մաքրում են ջրային ավազաններն ու մարդկանց ապահովում են խմելու ջրով:

Թեմատիկ պլանավորում

Դաս 21/1. Ծառի խնդրանքը (անգիր)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ծառն իր ճյուղերը ու՞մ հետ է համեմատում:
2. Ի՞նչ էր խնդրում ծառը:
3. Ի՞նչ կպատասխանես ծառի խնդրանքին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ծառն իր ճյուղերը համեմատում է որդիների հետ:
2. Իմանա , որ ծառը խնդրում է չկոտրել ճյուղերը:
3. Իմանա ,որ ծառին կպատասխանի,որ չի կոտրի ճյուղերը նոր ծառեր կտնկի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտագրել քառառատողը՝ ճիշտ դասավորելով տողերը:

    Մի՛ կոտրատիր իմ ճյուղերը,
    Ինչպես մայրդ սիրում է քեզ:
    Ես այնպես եմ սիրում նրանց,
    Որդիներն են նրանք իմ հեզ,

2. Վանկատել քառատողում նշված բառերը և որոշել հնչյունների ու տառերի քանակը:

    Տերև անգամ եթե պոկես,
    Սիրտս ցավից կմղկտա,
    Թե որ դու ինձ չպահպանես,
    Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա:

3. Կարդալ նամակը և փորձել մի քանի տողով գրել նման նամակ:

Նամակ ծառին

Ծառեր, դուք շատ կարևոր և օգտակար եք մեզ համար: Դուք թթվածինն եք շատացնում, մաքրում եք աղտոտված օդը, գեղեցկացնում եք մեր բակը: Ձեզանից ստանում ենք համեղ և գեղեցիկ մրգեր, իսկ ամռանը կարող ենք պաշտպանվել տոթից: Կներեք մեզ, որ երբեմն փչացրել ենք ձեզ, դուք շատ կարևոր եք մեզ համար:Մենք նոր ծառեր կտնկենք ,որ միշտ լինեք շատ և գեղեցկացնեք մեր շրջապատը:

Քո փոքրիկ բարեկամ

Դաս 2/1 Մայր Հայաստան (ընթերցել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է հայերի երկիրը:
2. Ըստ բանաստեղծության Հայաստանն ինչերի՞ <<մայրն>> է :
3. Ինչպիսի՞ զավակներ է ծնել Հայաստանը:
4. Որո՞նք են Հայաստանի պետական խորհրդանիշները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հայերի հայրենիքը Հայաստանն է:
2. Իմանա , որ Հայաստանը հողի, ջրի, լույսի, խաղողի, գինու, վտակների, գետերի, լեռների, քաջ զինվորների <<մայրն>> է :
3. Իմանա , որ Հայաստանը ծնել է քաջ ու արի զավակներ:
4. Իմանա,որ Հայաստանի պետական խորհրդանիշներն են ՝ հիմնը,դրոշը,զինանշանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել և նշված բառերով կազմել բառակապակցություններ:

Հայերի հայրենիքը կոչվում է Հայաստան: Հայրենիքը սրբացվել է և ժողովրդի հիշողության մեջ ամրագրվել առասպելներով, լեգենդներով ու հետաքրքիր պատմություններով: Այդ հայրենի հողը՝ հայրենիքը, պաշտպանելը դարձել է յուրաքանչյուր հայ մարդու սրբազան պարտքը և պատվավոր իրավունքը:

2. Տրված բառերը գրել համապատասխան սյունակներում:

Հող,մայր,լույս,ջուր,զինի,ժողովուրդ,վտակ,գետ,հնձվոր,գիտնական,զինվոր,բան ակ,շինարար,մանուկ

| Անձ ցույց տվող գոյականներ | Իր ցույց տվող գոյականներ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

3. Ընթերցել և արտագրել հրամայական նախադասությունը:

ԿՈՉ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻՆ

Փառք ու պատիվ, զինվորներին
Մեր քաջարի տղաներին:
Եղե՛ք տոկուն, եղե՛ք կանգուն,
Ու մեզ բերեք ուրախություն:
Լավ ծառայեք, իրար հարգեք,
Եվ ձեր կյանքը սիրով ապրեք:
Կանցնի ամեն դժվարություն,
Ու կդառնա հիշողություն:

4. Նկարը համապատասխանեցնել բառին:

Մեր Հայրենիք, ազատ անկախ,
Որ ապրել է դարե դար
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա եղբայր քեզ մի դրոշ,
Զոր իմ ձեռքով գործեցի
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան երեք գույնով,
Նվիրական մեկ նշան
Թող փողփողի թշնամու դեմ
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է
Մարդ մի անգամ պի՛տ մեռնի,
Բայց երանի՝ որ յուր ազգի
Ազատության կզոհվի:





Զինանշան - Հայաստանի զինանշանի մասին օրենքն ընդունվել է Հայաստանի Գերագույն Խորհրդի կողմից 1992 թվականի ապրիլի 19-ին:

Օրհներգ - «Մեր հայրենիք», Հայաստանի ազգային օրհներգը: Ընդունվել է 1991 թվականի հուլիսի 1-ին և հիմնված է Առաջին Հանրապետության օրհներգի վրա՝ տեքստի չնչին փոփոխություններով:

Դրոշ - Կազմված է կարմիր, կապույտ, նարնջագույն գույներից (վերևից ներքև)՝ հորիզոնական հավասարաչափ շերտերով, լայնքի և երկայնքի : «ՀՀ դրոշի մասին» առաջին օրենքն ընդունել է ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թվականի օգոստոսի 24-ին:

Թեմատիկ պլանավորում

Դաս 22/1 Մայր Հայաստան (անգիր):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ն են Հայաստանի բնակիչները:
2. Ինչո՞վ է հայտնի Հայաստանը:
3. Ինչու՞ ենք Հայաստանին մայր ասում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա , որ հայերն աշխատասեր,արարող,ստեղծագործ ու տաղանդավոր են :
2. Ինանա , որ Հայաստանը հայտնի է իր տեսարժան վայրերով,տաղանդավոր մարդկանցով,գիտնականներով ,մարզիկներով,հերոսներով ու չքնաղ բնությունով:
3. Իմանա ,որ Հայաստանին մայր ենք ասում ,որովհետև մայրն է ամեն բարիքի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել և ընդգծված հատկանիշ ցույց տվող բառերին ավելացնել առարկա ցուց տվող բառեր ու կազմել բառակապակցություններ:

Աշխատասեր ու արարող մի ժողովուրդ, որ քարից հաց է ստեղծել, միևնույն ժամանակ, իր սկզբնավորման օրից ի վեր, արյուն -քրտինք թափելով, պաշտպանել այդ քարե հողակտորը: Բառերով անհնար է բնութագրել հայի ոգին, կամքն ու սերը առ հայրենիք:

Մոտ 3000 տարեկան այս ժողովուրդը եղել է հաղթական միաանական հզոր երկիր, որի գերիշխանությունը ընդունել են բոլորը, այն ունեցել է և՛ անկումներ, և՛ կորուստներ, բայց երբեք հայը չի կորցրել իր անունը ու հայ լինելու իր կոչումը:

2. Բառերով ու նկարներով կազմել զույգեր.

   Յուրի Վարդանյան, Վիկտոր Համբարձումյան,Ալեքսանդր Թամանյան, Գառնի տաճար,Սևանա լիճ





_______________________________ _______________________________





_______________________________ _______________________________





_______________________________ _______________________________

3. Ընթերցել նշված հատվածը և նշված բառերը գրել համապատասխան սյունակներում:

Մեր Հայաստան մայրը բարի
Արդեն քանի հազար տարի
Զավակներ է ծնել արի
Եվ կանգնել է ընդդեմ չարի՝

Որդիներով իր քաջարի։

Եվ մենք հիմա, իմ սիրասուն,

Հայաստանին մայր ենք ասում.

Մայր՝ խնդալից քո մանկության,

Մայր՝ անսահման երջանկության,

Մայր՝ վարդագույն քաղաքների,

Մայր՝ երազի, լույսի անմար

Եվ զալիքի արևամայր։

| Բարդ բառեր | Ածանցավոր բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |

[Թեմատիկ պլանավորում](#)

Դաս 23/1    Հայաստան   /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Թվարկի՛ր այն ամենը, ինչը բանաստեղծը համարում է Հայաստանը։
2. Հեշտությա՞մբ էր կառուցել պապի պապը իր տունը։
3. Ի՞նչ որոշեց բանաստեղծության հերոսը։
4. Թվարկի՛ր հայ նշանավոր հերոսների անուններ։
5.Տնակի մեջ տեղավորի՛ր այն գոյականները, որոնք պատասխանում են ի՞նչ հարցին։






Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ Հայաստանը հերոսի անունն է, ազգանունը, լեզուն, այբուբենը, հայրենի տունը,
2. որ պապի պապը տունը կառուցել էր տանջանքով,
3. որ ոչ մի սուր չի ջնջելու իր անունը, ազգանունը, լեզուն, այբուբենը,
4. որ Վարդան Մամիկոնյանը, Գևորգ Չաուշը, Անդրանիկ Օզանյանը, Մոնթեն, Ռոբերտ Աբաջյանը, Արմենակ Ուրֆանյանը հերոսներ են,
5. որ ի՞նչ հարցին պատասխանում են իր ցույց տվող գոյականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.համառոտ ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը,

2. ուշադրություն դարձնել առանցքային կետերին ,

3.ներկայացնել հերոսի որոշումը,

4. ճանաչել հայ հերոսներին և թվարկել նրանց անունները,

5. տարբերել անձ և իր ցույց տվող գոյականները:

Թեմատիկ պլանավորում

Դաս 24/1 Հայաստան /անգիր/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է մեր երկրի պաշտոնական անվանումը: Նշի՛ր մայրաքաղաքը:
2. Թվարկի՛ր ՀՀ պետական խորհրդանիշները:
3. Ներկի՛ր ՀՀ դրոշը համապատասխան գույներով.



4. Հայաստանում ապրող հայը կոչվում է հայաստանցի: Ինչպե՞ս ենք կոչում՝

ա) Ամերիկայում ապրող հային, բ) Լիբանանում ապրող հային, գ) Ֆրանսիայում ապրող հային:

5. Տրված օրինակին հետևելով՝ գրի՛ր հայկական այնպիսի անուններ, որոնցից ազգանուններ են կազմվել:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ Հայաստանի պաշտոնական անվանումը Հայաստանի Հանրապետություն է, մայրաքաղաքը Երևանն է,
2. որ դրոշը, զինանշանը, օրհներգը պետական խորհրդանիշներն են ,
3. որ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն,
4.որ նշված երկրներում ապրողներին անվանում են ամերիկացի, լիբանանցի, ֆրանսիացի,
5.որ Գևորգ, Մկրտիչ, Համբարձում, Արամ, Տիգրան և այլ անուններով կարելի է կազմել ազգանուններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել երկրի պաշտոնական անվանումն ու նրա մայրաքաղաքը,

2. թվարկել պետական խորհրդանիշները,

3. ճիշտ ներկել դրոշի գույները,

4. ճիշտ անվանել որևէ երկրի բնակչին,

5. կազմել հայկական ազգանուններ՝ պահպանելով մեծատառի գրությունը:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 25/1 Սասունցի Դավիթ 1 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ու՞մ գերեզմանին այցելեց Սասունցի Դավիթը։

2.Ու՞մ դեմ էր նա պատրաստվում կռվել։

3. Ի՞նչ առաջարկեց ավնոր ծերունին Սասունցի Դավթին։

4. Օրհնել բառով կազմի՛ր նախադասություն։

5.Ձի բառի հոմանիշը նժու՞յգն է, թե՞ ավանակը ։




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.որ Սասունցի Դավիթն այցելեց հոր գերեզմանին,

2.որ նա պատրաստվում էր կռվել Մսրա Մելիքի զորքի դեմ,

3.որ ալևոր ծերունին առաջարկեց կռվել հենց թագավորի հետ,

4.

5. որ ձի բառի հոմանիշը նժույգն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.համառոտ  ներկայացնել բնագրի  բովանդակությունը,

2.  մտապահել Մսրա Մելիքի անունը,

3. ներկայացնել ալնոր ծերունու խոսքը,

4. կազմել նախադասություն,

5. նշել  բառի հոմանիշը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 26/1   Սասունցի Դավիթ 1    /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Քանի՞ ճյուղ ունի «Սասնա ծռեր» վիպերգը։

2. Կոնկրետ հեղինակ ունի՞ վիպերգը, թե՞ այն ստեղծել է ժողովուրդը։

3. Նշված հատկանիշներից որո՞նք են բնորոշ Սասունցի Դավթին. ազատասեր, խորամանկ, հայրենասեր, բարի, դաժան։

4.Նշի՛ր Դավթի զենքի անունը։

5. Հայր, զինվոր, ծերունի բառերը ա՞նձ ցույց տվող գոյականներ են, թե՞ իր ցույց տվող գոյականներ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.որ «Սասնա ծռեր» վիպերգն ունի 4 ճյուղ,

2.որ վիպերգն ստեղծվել է ժողովրդի կողմից,

3.որ Սասունցի Դավիթն ազատասեր է, հայրենասեր ու բարի,

4.որ Դավթի զենքը Թուր Կայծակին է,

5.որ նշված բառերն անձ ցույց տվող գոյականներ են։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.մտապահել էպոսի ճյուղերի քանակը,

2. հիշել, որ վիպերգն ստեղծել է ժողովուրդը,

3.բնութագրել գլխավոր հերոսին,

4.նշել զենքի անունը,

5. զանազանել անձ և իր ցույց տվող գոյականները:

Դաս 2/1 Սասունցի Դավիթ 2 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ են հերոսին Սասունցի Դավիթ անվանում :

2. Դավիթը ո՞ր կենդանու հետ է համեմատում Մսրա Մելիքին:

3. Տրված հատկանիշներից որո՞նք են Դավթին բնորոշ, որո՞նք՝ Մելիքին. քաջ, կեղծավոր, ազնիվ, խորամանկ, դաժան, հայրենասեր:

| Դավիթ | Մելիք |
| --- | --- |
| | |



4.Ո՞ր բառն է ճիշտ գրված:






5. Տրված բառերը տեղավորի՛ր համապատասխան զամբյուղի մեջ. Միհր, ձի, Սանասար, հաց, Քեռի Թորոս, հող





ՀԱՏՈՒԿ ԳՈՅԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ Դավիթը Սասուն քաղաքից էր,

2.որ համեմատում է աղվեսի հետ,

3.որ Դավիթը հայրենասեր է, ազնիվ ու քաջ , իսկ Մելիքը՝ կեղծավոր, խորամանկ ու դաժան,

4. որ ճիշտ տարբերակն է՝ խաբել,

5. որ հատուկ գոյականները գրվում են մեծատառով , իսկ հասարակ գոյականները՝ փոքրատառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.հիշել, թե որ քաղաքից էր Դավիթը,

2. բնագրի մեջ գտնել այդ հատվածը,

3.ճիշտ հատկանիշներով բնութագրել հերոսներին,

4.գրել բառը ճիշտ ուղղագրությամբ,

5.զանազանել հատուկ և հասարակ գոյականները:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 27/1   Սասունցի Դավիթ 2     /անգիր հատված/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս  ես պատկերացնում Սասունցի Դավթին:

2. Ի՞նչ է նշանակում նենգ: Ընդգծի՛ր  ճիշտ տարբերակը:




3. Էս, այս, էդպես, այդպես, ջաղացքար, ջրաղացքար. տղաներից յուրաքանչյուրի մոտ գրի՛ր այն բառերը, որոնք նա կկիրառեր իր խոսքում:





4.Գտի՛ր նման պատկերները և նրանց մեջ գրված բառերից կազմի՛ր հոմանիշների զույգեր:




անթիվ

________________________________

________________________________

________________________________

5. Կեղծավոր նշանակում է «ինչ-որ մեկի համակրանքը շահելու համար իր իսկական զգացմունքները կեղծող»: Կեղծավոր ժպիտ, կեղծավոր լեզու. սրանք բառակապակցություն-ներ են: Եվս մեկը կազմի՛ր դու:

________________________________________________________________________________________

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.

2.որ նենգ նշանակում է «խարդախ»,

3.որ էս, էսպես, ջաղացքար բառերը խոսակցական են, այս, այդպես, ջրաղացքար բառերը՝ գրական,

4.որ զարկել-հարվածել, անթիվ-անհամար, փայլատակել-կայծկլտալ բառազույգերը հոմա-նիշներ են :

5.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.երևակայել և հակիրճ ներկայացնել իր պատկերացրածը,

2. բացատրել բառի իմաստը,

3.տարբերել խոսակցական բառերը գրականից,

4.կազմել հոմանիշային զույգեր,

5. կազմել բառակապակցություն

Թեմատիկ պլանավորում

Դաս 28/1   Մատենադարան      /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ու՞մ անունով է անվանակոչվել Մատենադարանը ։
2. Հայերը ինչի՞ վրա էին գրում հնում։
3. Ինչի՞ց էին պատրաստում մագաղաթները։Բնագրից գտի՛ր պատասխանը։
4.Հնում ի՞նչ է նշանակել մատյան։
5. Տարբերակներից ընտրի՛ր և դատարկ վանդակում գրի՛ր անհրաժեշտ բառը։

Մատենադարանը կոչվում է նաև ձեռագրատուն, քանի որ այնտեղ պահվում են հազարա-վոր                     մատյաններ։

✓ դպրոցական
✓ ձեռագիր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ Մատենադարանը անվանակոչվել է Մեսրոպ Մաշտոցի անունով,
2.որ գրում էին մագաղաթի վրա,
3.որ մագաղաթները պատրաստում էին կենդանու կաշվից,
4.որ մատյան նշանակել է «գիրք»։
5. որ Մատենադարանը կոչվում է նաև ձեռագրատուն, քանի որ այնտեղ պահվում են հա-զարավոր ձեռագիր մատյաններ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել Մեսրոպ Մաշտոցի անունը,

2. հիշել, թե ինչպես էր կոչվում թղթի «նախահայրը»,
3. բնագրից գտնել  հարցի պատասխանը,
4. մտապահել բառի բացատրությունը,
5. ընտրել ճիշտ տարբերակը

[Թեմատիկ պլանավորում](#)

Դաս 29/1  Մատենադարան  /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս  են հայերը փրկել գերի ընկած  ձեռագրերը։
2.



Մեկը կշռում է մոտ 28 կգ, ունի 600 թերթ, որոնցից ամեն մեկը պատրաստված է մեկ հորթի կաշվից, իսկ մյուսը լուցկու տուփի չափ է, կշռում է 19 գրամ, պատրաստված է նորածին ուլի կաշվից:

Ինչի՞ մասին է խոսքը։

3.   Շարունակի՛ր  ըստ նմուշի. որդի - որդու,   գինի - ...,      այգի -  ...      :
4.     Ըստ նմուշի՝ ասա՛ ընդհանուր իմաստն արտահայտող բառը.

տանձ, խնձոր, սալոր, կեռաս, բալ-  միրգ,

հորթ, ուլ, գառ, գայլ, շուն, փիղ-  ...     :

5.     Գտի՛ր «թաքնված»  բառը:

 + ե   = փայտե

 + ե   =         ?

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.որ հայերը փող  են հավաքել, վճարել  և ձեռագրերն ազատել գերությունից,

2.որ հարցը Մատենադարանում պահվող ամենամեծ և ամենափոքր ձեռագրերի մասին է,

3.որ գինի և այգի բառերի թեք ձևերը կլինեն գինու, այգու,

4. որ հորթը, ուլը, գառը, գայլը, շունը, փիղը  կենդանիներ են,

5. որ կազմվում է  թղթե  բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել բնագրի վերջին մասը,
2. հիշել ամենամեծ և ամենափոքր ձեռագրերի մասին,
3. ձևային փոփոխության ենթարկել տրված գոյականները,
4. նշել տրված բառերի ընդհանուր իմաստը,
5. կազմել ածանցավոր բառեր:

Թեմատիկ պլանավորում

Դաս 30/1   Խաչքար   /անգիր/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ըստ բանաստեղծության ինչպիսի՞ն է խաչքարը: Ներկի՛ր ճիշտ տարբերակները:

խոնարհ   պարզ   նոր

2. Խաչքարերի կենտրոնական մասում ի՞նչ է պատկերված:
3. Քամի, ձյուն, շոգ, տոթ. սրանք բնության երևույթներ են : Էլ ի՞նչ բնության երևույթներ գիտես, ավելացրո՛ւ շարքին:
4. Խաչքար բառը կազմությամբ բարդ է, ունի երկու արմատ `խաչ և քար : Տարբերակներից ընտրի՛ր այն բառը, որը նույնպես բարդ է:

քարե   քարտաշ

5. Բերված օրինակները հակառակ իմաստ արտահայտող բառեր` հականիշներ են: Գրի՛ր շիտակ կամ ուղիղ բառի հականիշը:

| | |
|---|---|
| խրթին | պարզ |
| խոնարհ | ըմբոստ |
| շիտակ | |

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.որ բանաստեղծության մեջ խաչքարը պարզ ու խոնարհ է,

2.որ խաչքարի կենտրոնական մասում խաչ է պատկերված,

3.որ անձրևը, կարկուտը, մրրիկը, ծիածանը նույնպես բնության երևույթներ են,

4.որ բարդ է քարտաշ բառը,

5.որ շիտակ բառի հականիշը ծուռն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բանաստեղծությունից գտնել խաչքարի հատկանիշները,
2. տրամաբանել, որ խաչքար բառը հուշում է, թե ինչ է պատկերված նրա վրա,
3. հիշել բնության այլ երևույթներ,
4. տարբերել ածանցավոր բառը բարդ բառից,
5. գտնել բառի հականիշը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 31/1   Օշականյան հյուրընկալություն 1          /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հեղինակը լեհ հյուրին ինչո՞ւ էր տարել Օշական:
2. Ինչի՞ հոտն առան նրանք:
3. Ի՞նչ արեցին հեղինակն ու հյուրը: Կարդա՛ համապատասխան մասը:
4. Ինչի՞ մեջ են թխում լավաշը:
5. Բերված օրինակները հակառակ իմաստ արտահայտող բառեր՝ հականիշներ են: Գրի՛ր բարի բառի հականիշը:




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ նրանք Օշականում էին՝ Մաշտոցի շիրիմը տեսնելու,
2. որ գյուղում նոր թխված լավաշի բույրն էր տարածվել,
3. որ նրանք մտան այն տունը, որտեղից լավաշի բույրն էր տարածվել, և լավաշ ու պանիր խնդրեցին,

4. որ լավաշը թխում են թոնրի մեջ,

5. որ բարի բառի հականիշը չարն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել Օշական գնալու նպատակը,

2. կենտրոնանալ կարևոր դրվագների վրա,

3.

4. մտաբերել թոնիր բառը,

5. գտնել տրված բառի հականիշը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 32/1 Օշականյան հյուրընկալություն 1 /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Եթե արտասահմանից հյուր ունենաք, նրան ու՞ր կտանեք:
2. Ուշադրությո՛ւն դարձրու առաջին սյունակի բառերի ուղղագրությանը և երկրորդ սյունակում գրի՛ր ուղղագրական արժեք ունեցող տառը:







3. Մենք լավաշի անուշ բույրն առանք : Տրված նախադասության մեջ ընդգծված բառը ո՞ր բառով կփոխարինես:

ա. գույն բ. հոտ

4. Տուն- տներ բառազույգի առաջին բառը (տուն) դրված է եզակի թվով և ցույց է տալիս միայն մեկ առարկա, իսկ երկրորդը (տներ) ՝ հոգնակի թվով և ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ: Կազմի՛ր շուն, ծառ, քար բառերի հոգնակի թիվը:
5. Ինչպիսի՞ն է լավաշը: Մի քանի հատկանիշ գրի՛ր:

նրբահամ



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.
2. որ որևէ, խնդրել, երեսուներեք, բառերը պատկանում են նույն ուղղագրական կանոնին,
3. որ բույր և հոտ բառերը հոմանիշներ են,
4. որ միավանկ բառերին ավելանում է եր ՝ հոգնակին կազմելու համար,
5. որ լավաշը բարակ է, համեղ, անուշաբույր ու նրբաթերթ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. շարադրել սեփական մտքերը,
2. տեղադրել ճիշտ տառը՝ օգտվելով հուշումից,
3. տարբերակներից ընտրել բույր բառի հոմանիշը,
4. կազմել միավանկ գոյականների հոգնակի թիվը,
5. թվարկել լավաշի մի քանի հատկանիշ:

Թեմատիկ պլանավորում

Դաս 33/1 Օշականյան հյուրընկալություն 2 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Տանտերերն ի՞նչ հյուրասիրեցին անակնկալ հյուրերին:
2. Ի՞նչ ենթադրեց լեհ հյուրը՝ Վոյտեկը:
3. Նշված հատկանիշներից որոնցո՞վ կբնութագրես գյուղացիներին. հյուրասեր, ժլատ, բարի, առատաձեռն, աղքատ:
4. Եթե Օշական բառին ավելացնենք ցի վերջածանցը կստանանք օշականցի բառը: Իսկ ի՞նչ կստանանք, եթե Լոռի, Գյումրի բառերին ավելացնենք եցի վերջածանցը: Գրի՛ր:



5. Ագահ բառի հականիշը ժլա՞տն է, թե՞ առատաձեռնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ նրանք հաց, պանիր, կարագ, մածուն, մուրաբա, թթու, գինի, խորոված հյուրասիրեցին,
2. որ Վոյտեկը ենթադրեց՝ գյուղացիները հեղինակի ծանոթներն էին,

3. որ գյուղացիները հյուրասեր էին, բարի ու առատաձեռն,
4. որ կստացվեն լոռեցի, գյումրեցի բառերը,
5. որ առատաձեռնը ագահ բառի հականիշն է ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հակիրճ ներկայացնել հյուրասիրության հատվածը,
2. ասել, թե ինչ ենթադրեց լեհ հյուրը,
3. ճիշտ բնութագրել գյուղացիներին,
4. ճիշտ անվանել որևէ տեղի բնակչին,
5. նշել բառի հոմանիշը։

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 34/1   Օշականյան հյուրընկալություն 2     /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Քեզ դուր  եկա՞վ  պատմությունը։
2. Ո՞րն է մածունի հայրենիքը։
3. Ի՞նչ  է նշանակում վեր կենալ ։ Ներկի՛ր ճիշտ տարբերակը։

նստել    ելնել

4. Ո՞րն է  գիշեր  բառի  հականիշը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.
2. որ մածունի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է,
3. որ <u>վեր կենալ</u> նշանակում է <u>ելնել</u>,
4. որ գիշեր բառի հականիշը ցերեկն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. արտահայտել սեփական կարծիքը,
2. նշել մածունի հայրենիքը,
3. ընտրել ճիշտ տարբերակը,
4. նշել հականիշը,

Թեմատիկ պլանավորում

Դաս 35/1   Արագածի աղբյուրները           /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ըստ բանաստեղծության որտեղի՞ց են սկիզբ առնում աղբյուրները։
2. Ինչերի՞  հետ են համեմատվում աղբյուրները։
3. Իրենց ճանապարհին ի՞նչ հանդիպումներ են ունենում աղբյուրները։
4. Գտի՛ր  հոմանիշների զույգերը ։ Ներկի՛ր առանց զույգի մնացած բառը ։




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ աղբյուրները սկիզբ են առնում Արագածից,
2. որ նրանք համեմատվում են ժիր ու կայտառ զառնուկների հետ,
3. որ ճանապարհին հանդիպում են խոտերի, ծիլ ու  ծաղիկների  հետ,
4. որ թռչկոտել- ցատկոտել, շոգ- տապ, կայտառ- աշխույժ բառազույգերը հոմանիշներ են։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել լեռան անունը,
2. հասկանալ, թե ինչերի հետ են համեմատվում աղբյուրները,
3. թվարկել աղբյուրներին հանդիպած առարկաները,
4. կազմել հոմանիշային զույգեր:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 36/1 Արագածի աղբյուրները /անգիր/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռը:
2. Քանի՞ գագաթ ունի Արագածը:
3. Տրված գոյականները դասավորի՛ր համապատասխան սյունակում.<u>աղբյուր, ժայռ, խոտ, լանջ, զանգակ, զավակ:</u>




4. Ըստ գույների բառակապակցություններ կազմի՛ր ու գրի՛ր:




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռն Արագածն է,
2. որ Արագածն ունի չորս գագաթ,
3. որ –եր ավելանում է միավանկ բառերին, -ներ՝ բազմավանկ,
4. որ կազմվում են ժիր զառնուկ, զրնգալից աղբյուրներ, մանկան ծիծաղ բառակապակցությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել լեռան անունը,
2. մտապահել կարևոր փաստեր,
3. ճիշտ կազմել միավանկ և բազմավանկ գոյականների հոգնակի թիվը ,
4. կազմել բառակապակցություններ:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 37/1   Փոքրիկ հայրենասերը 1           /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ  է պատմության գլխավոր հերոսը։
2. Ծնողներն ինչո՞ւ էին հանձնել թափառաշրջիկ կրկեսի տիրոջը։
3. Կրկեսի տերը ինչպե՞ս էր վարվում նրա հետ։
4. Ինչպե՞ս էր տղան հայտնվել նավի վրա։
5. Ցնցոտին մաշվա՞ծ, թե՞ նոր հագուստն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.**

1. որ գլխավոր հերոսը իտալացի մի փոքրիկ  տղա է,
2. որ նրա  ծնողները  աղքատ գյուղացիներ էին,
3. որ կրկեսի տերն անընդհատ ծեծում ու սոված  էր պահում տղային,
4. որ նա փախել էր իրեն ծեծողից և  վերադառնում էր հայրենիք,
5. որ ցնցոտին մաշված հագուստն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.**

1. համառոտ ներկայացնել հերոսին,
2. ասել տղային կրկեսի տիրոջը  հանձնելու պատճառը,
3. ներկայացնել կրկեսի տիրոջ  վերաբերմունքը,
4. բացատրել՝ ինչպես էր տղան հայտնվել նավի վրա,
5. բացատրել բառի իմաստը։

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 38/1 Փոքրիկ հայրենասերը 1 /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ովքե՞ր տղային մետաղադրամներ տվեցին։
2. Վերցրե՞ց տղան այդ գումարը։
3. Քո կարծիքով կրկեսի տերը անխի՞ղճ էր, թե՞ բարի ։ Մեկնաբանի՛ր։
4. Ի՞նչ է նշանակում հսկայական ։ Ընտրի՛ր ճիշտ տարբերակը։







5.



Ես միացրել եմ ընդ նախածանցն ու արժակ արմատը և ստացել ընդարժակ բառը։

Ի՞նչ բառ կստացվի, եթե ընդ նախածանցն ու միշտ արմատն իրար միացնես։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ շոգենավի երեք ուղևորներ տղային մետաղադրամներ տվեցին,
2. որ տղան վերցրեց այդ գումարը՝ կիսաձայն շնորհակալություն հայտնելով,
3. որ կրկեսի տերն անխիղճ էր,
4. որ հսկայական նշանակում է մեծ,
5. որ կստացվի ընդմիշտ բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել բնագրի վերջին հատվածը,
2. ճիշտ բնութագրել կրկեսի տիրոջը,
3. նշել բառի ճիշտ բացատրությունը,
4. կազմել ածանցավոր բառ:

Թեմատիկ պլանավորում

Դաս 39/1   Փոքրիկ հայրենասերը 2     /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ տղան վերցրեց այդ գումարը:
2. Երեք ուղևորներն ինչպե՞ս  արտահայտվեցին տղայի հայրենիքի՝ Իտալիայի մասին:
3. Ինչո՞ւ տղան շպրտեց մետաղադրամները:
4. Սլաքով միացրո՛ւ այն բառերը , որոնք հոմանիշներ են.

բարկանալ

զայրանալ

խաղաղվել

5. Իջնել  բառով  կազմի՛ր մեկ  նախադասություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ նա մտածում էր նոր հագուստ գնելու և ծնողներին այդ գումարից տալու մասին,
2. որ նրանք ասացին՝ Իտալիայում հանդիպել են  խաբեբաների ու ավազակների,
3. որ տղային դուր չեկավ  հարբած ուղևորների վերաբերմունքը,
4. որ զայրանալ- բարկանալ բառազույգը հոմանիշներ են:
5.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գումարը վերցնելու պատճառը նշել,
2. ներկայացնել երեք ուղևորների զրույցը,
3. ներկայացնել տղայի բարկության պատճառը,
4. հոմանիշային զույգեր կազմել,
5. կազմել նախադասություն:

Թեմատիկ պլանավորում

Դաս 40/1   Փոքրիկ հայրենասերը 2      /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Նշված հատկանիշներից որո՞նք են բնորոշ տղային. փոքրիկ, ճարպիկ, ագահ, դաժան, հայրենասեր, աղքատ:
2. Քո կարծիքով տղան ճի՞շտ վարվեց:
3. Նշված նախադասություններից ո՞րն է համապատասխանում բնագրի բովանդակությանը:

○ Ամբողջ երկու տարի նա կուշտ հաց չէր կերել:

○ Տղան չէր ուզում վերադառնալ ծնողների մոտ:

4. Անկիրթ բառի մեջ ան-  ածանցը նախածա՞նց է, թե՞ վերջածանց:
5. Քաղաքը, քաղաքի, քաղաքին, քաղաքից, քաղաքով, քաղաքում . այս բառի ձևափոխությունների նմանությամբ ձևափոխի՛ր նավ  բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ տղան փոքրիկ էր, աղքատ, բայց նաև ճարպիկ, համարձակ ու հայրենասեր,
2.
3. որ բնագրին  համապատասխանում է առաջին նախադասությունը,
4. որ ան-ը նախածանց է,
5. որ նավը, նավի, նավին,նավից, նավով, նավում ձևափքխություններն է ճիշտ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. առանձնացնել տղային բնորոշ հատկանիշները,
2. արտահայտել սեփական կարծիքը,
3. ընտրել ճիշտ տարբերակը,
4. տարբերել նախածանցը վերջածանցից,
5. ճիշտ ձևափոխել բառը:

[Թեմատիկ պլանավորում](#)

Դաս 41/1 Ա՜խ, ի՜նչ լավ են սարի վրա...  /անգիր/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քո կարծիքով տարվա ո՞ր եղանակն է նկարագրված :
2. Կարդա՛ բանաստեղծությունը և լրացրո՛ւ բաց թողնված բառերը:

> Շաղ են շողում ... ու ...,
>
> Շնչում բուրմունք եղեմային:

3. Բանաստեղծության մեջ հանդիպում է թարմ առավոտ բառակապակցությունը: Ի՞նչը կարող է թարմ լինել:
4. <u>Վարդը</u> ծաղիկ է: Կարո՞ղ ես գրել անուններ, որոնք կազմված են վարդ արմատից:
5. <u>Ամպ</u> բառով կազմի՛ր նախադասություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.**

1. Տարվա որ եղանակն է նկարագրված,
2. որ բաց են թողնված <u>ծաղիկ ու խոտ</u> բառերը,
3. որ <u>թարմ</u> կարող է լինել միրգը, բանջարեղենը,
4. որ վարդ արմատից կազմված են <u>Վարդուհի, Վարդանուշ, Վարդիթեր</u> անունները:
5. որ նախադասությունը ավարտուն միտք է արտահայտում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հայտնել իր կարծիքը,
2. լրացնել անհրաժեշտ բառերը,
3. ասել՝ ինչերն են թարմ լինում,
4. կազմել  բառեր նշված արմատով,
5. կազմել նախադասություն:

Թեմատիկ պլանավորում

Դաս 42/1 Ազգային երգը 1 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր դաշտի գեղեցիկ աշունն է նկարագրված:
2. Ինչպիսի՞ն էր Մասիսը:
3. Հեղինակը նուռն ու խաղողը ինչերի՞ հետ է համեմատում:
4. Արարատյան, առավոտյան, երեկոյան բառերի մեջ ո՞ր վերջածանցն է ընդհանուր:
5. Տղայի- ո՞ւմ (անձ ցույց տվող գոյական է), գյուղի- ինչի՞ (իր ցույց տվող գոյական է). ի՞նչ հարցի է պատասախանում դպրոցի բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ նկարագրված է Արարատյան դաշտի գեղեցիկ աշունը,
2. որ Մասիսը պարզ ու վճիտ էր,
3. որ նուռն ու խաղողը կարծես հրեղեն գնդակներ լինեին,
4. որ ընդհանուր է –յան վերջածանցը:
5. որ պատասխանում է ինչի՞ հարցին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել դաշտի անունը,
2. գտնել Մասիսը բնութագրող բառերը,
3. ճիշտ ներկայացնել համեմատությունը,
4. առանձնացնել վերջածանցը,
5. ձևակերպել ճիշտ հարցը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 43/1   Ազգային երգը  1         /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ  էին փակվել հայկական դպրոցները։
2. Պատմվածքում նկարագրվող դպրոցը  բացօթյա՞ էր, թե՞ փակ։
3. Տեղադրի՛ր պատմվածքի  բովանդակությանը համապատասխանող բառը։
   Հայկական գավառներում սկսեցին գործել [ ] դպրոցներ։
   ա. մեծ  բ. գաղտնի
4. Վճիտ աղբյուր  բառակապակցության մեջ վճիտ  նշանակում է՝
   ա. պղտոր  բ. մաքուր
5. Տարրական, երրորդ, չորրորդ, անդորր, մրրիկ. այս բառերում ի՞նչ ընդհանրություն կա։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.**

1. որ ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները,
2. որ պատմվածքում նկարագրվող դպրոցը  բացօթյա էր,
3. որ  գավառներում սկսեցին գործել  <u>գաղտնի</u>  դպրոցներ,
4. որ վճիտ  նշանակում է <u>մաքուր,</u>
5. որ բոլոր բառերում կա կրկնակ բաղաձայն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ցարական կառավարություն բառակապակցությունը,
2. ներկայացնել պատմվածքի ավարտը,
3. հիշել կարևոր փաստերից մեկը,
4. նշել բառի հոմանիշը,
5. նկատել, թե բառերը որ ուղղագրական կանոնին են պատկանում:

Թեմատիկ պլանավորում

Դաս 44/1 Ազգային երգը 2 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ ուսուցիչ ուներ գյուղի դպրոցը:
2. Աշակերտներն ի՞նչ էին սովորում դպրոցում:
3. Հեղինակի ընկերը ի՞նչ խնդրեց ուսուցչին:
4. Ազգային բառը ածանցավոր է՝ ազգ (արմատ) + ային (ածանց): Տրված նախադասության մեջ գտի՛ր նույն վերջածանցով բառը:




5. Հուժկու ձայն բառակապակցության հուժկու բառը փոխարինի՛ր հոմանիշով: Նշի՛ր ճիշտ տարբերակը:

ա. 


բ. 


Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ,

2. որ սովորում էին գրել, կարդալ, ծանոթանում էին հայոց պատմությանը,
3. որ խնդրեց մի երգ երգել,
4. <u>որ դաշտային</u> բառը նույն կազմությունն ունի,
5. որ հուժկու բառի հոմանիշը <u>ուժեղն</u> է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել բովանդակությունը,
2. թվարկել՝ ինչ էին սովորում աշակերտները ,
3. ասել՝ ինչ խնդրեց հեղինակի ընկերը,
4. գտնել նույն վերջածանցով բառը,
5. նշել բառի հոմանիշը:

[Թեմատիկ պլանավորում](#)

Դաս 45/1 Ազգային երգը 2 /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ երգ երգեցին երեխաները:
2. Ամենքի երեսին պայծառ ժպիտ կար : Բնագրից մեջբերված այս նախադասությունից ի՞նչ կարելի է ենթադրել:




3. Ավարտի՛ր նախադասությունը:

   Քանի հայոց «այբ-բեն»-ը ապրում է, հայը [ ] :
4. Լավ - ավելի լավ – ամենալավ . այս օրինակի նմանությամբ կազմի՛ր ուրախ ածականի համեմատության աստիճանները:
5. Գրի՛ր տրված բառերի հականիշները:




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ նրանք երգեցին «Այբ-բեն-գիմ»-ը,
2. որ բոլորին դուր էր եկել երգը,

3. որ քանի հայոց «այբ-բեն»-ը ապրում է, հայը չի մեռնի,
4. որ կստացվի ուրախ- ավելի ուրախ- ամենաուրախ
5. որ ճիշտ - սխալ, ուրախ – տխուր բառազույգերը հականիշներ են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել ՝ ինչ երգ կատարեցին,
2. հասկանալ, որ երգը դուր էր եկել բոլորին,
3. ավարտել նախադասությունը՝ չշեղվելով բնագրի բովանդակությունից,
4. կազմել ածականի համեմատության աստիճանները,
5. նշել բառերի հականիշները:

Թեմատիկ պլանավորում

Դաս 46/1 Բաբելոնի աշտարակը /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:



1. Ի՞նչ որոշեցին մարդիկ մի օր:
2. Ի՞նչ էին ձգտում աշտարակ կառուցող մարդիկ:
3. Ինչպե՞ս պատժեց Աստված այդ մարդկանց:
4. Թվարկի՛ր մարդկային մի քանի դրական հատկանիշ:
5. Քո կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինեն մարդիկ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որոշեցին կառուցել մի քաղաք ու մի աշտարակ
2. ձգտում էին փառք, համբավ ու անուն վաստակել
3. խառնեց մարդկանց լեզուները
4. անկեղծություն, նվիրվածություն, բարություն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վեր հանել տեքստի հիմնական իմաստը

2. տարբերակել մարդկային դրական և բացասական հատկանիշները

3. առանձնացնել բնագրի հիմնական միտքը

4. արժևորել մարդկային դրական հատկանիշները

5. արտահայտել սեփական կարծիքը

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 47/1 Բաբելոնի աշտարակը /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Լեզու, լեզվի, լեզվից շարքի նմանությամբ կազմի՛ր կատու բառի փոփոխված ձևերը։

Կատու,

2.Լեզու-ի՞նչ, լեզուներ-ինչե՞ր։ Մյուս երկուսի հարցերը ինքդ գրի՛ր։

Մարդ- մարդիկ-

3.Կազմի՛ր լեզուներ։




4. Կազմածդ լեզուներից մեկով նախադասություն հորինի՛ր։

5. Ո՞ր ածանցը միացնես բառերին, որ դառնան ածանցավոր բառեր։ Ություն թե՞ եղեն։

Գոռոզ-

շինարար-

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. գոյականի փոփոխված ձևերը
2. եզակի և հոգնակի թվով գոյականի հարցերը
3. լեզուների անվանումները
4. .....
5. ածանցավոր բառերի կազմությունը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գոյականը ենթարկել ձևային փոփոխության
2. կազմել գոյականի հարցերը
3. տրված ածանցով կազմել բառեր
4. կազմել նախադասություն
5. տրված արմատին միացնել ճիշտ ածանցը

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 48/1 Մայրենի լեզու /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞րն է քո մայրենի լեզուն։

2. Ինչի՞ հետ կհամեմատես քո լեզուն։

3. Տրվածներից ո՞րն է հատուկ գոյական։ Նշի՛ր։

ա. դպրոց բ.Մեսրոպ Մաշտոց գ. այբուբեն

4. Ո՞րն է առաջին բառի հականիշը։

5. Ընդգծի՛ր հոգնակի թվով գոյականները։

Տառեր, պատուհան, մատներ, մանուկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա. ՎԵՐԱՆԱՅԵԼ

1. հայերենը
2.
3. Մեսրոպ Մաշտոց
4. վերջին
5. տառեր, մատներ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել սեփական լեզուն

2. կատարել պարզ համեմատություն

3. առանձնացնել հատուկ գոյականը

4. գտնել հականիշը

5. ընդգծել հոգնակի թվով գոյականները

Թեմատիկ պլանավորում

Դաս 49/1 Մայրենի լեզու /անգիր/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Այնպես արա՛, որ բառերը փոքրանան։ Օրինակ փոքր-փոքրիկ

Ձագ-

շուն-

2. Բաց թողնված տեղերում ո՞ր տառը կտեղադրես։

-ջախ, -գնական

3. Գարնան քնքշանք, խնդուն մանկիկ, զնգուն տառ։ Ինչե՞ր են սրանք։ Նշի՛ր ճիշտը։

ա. նախադասություն բ. բառակապակցություն գ. տեքստ

4. Ի՞նչը կարող է լինել անշեջ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. մանկիկ
2. օջախ, օգնական
3. բառակապակցություն
4. կրակը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կազմել գոյականի փաղաքշական ձևը

2. բառիմաստից հասկանալ և համապատասխան տառը տեղադրել

3. տարբերել բառակապակցությունը

4. կարողանա կատարել պարզ վերլուծություն

Թեմատիկ պլանավորում

Դաս 50/1 Մեսրոպյան տառեր /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ են տառերը կոչվում մեսրոպյան։

2. Քանի՞ տառ ունի մեսրոպյան այբուբենը։

3. Հմայք – հմայել, վազք-

4. Զույգերից մեկով նախադասություն կազմի՛ր։

5. Օշականում եղե՞լ ես։ Պատմի՛ր տպավորություններդ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որովհետև ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը
2. 36 տառ
3. վազք-վազել
4. կազմել նախադասություն։
5.Պատմել իր տպավորությունների մասին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կատարել պարզ վերլուծություն

2. Ճանաչել սեփական պատմությունը

3. գոյականը դարձնել բայ

4. կազմել նախադասություն

5.խոսք կառուցել

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 51/1 Մեսրպյան տառեր /անգիր/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է հայերենի առաջին ուսուցիչը։

2. Հայերեն ո՞ր տառի ձնն է քեզ ամենից շատ դուր գալիս։ Պատմություն հորինի՛ր այդ տառի մասին։

3. Ի՞նչ նշանակություն ունի քո անունը։

4. Որո՞նք են հայերենի ձայնավոր հնչյունները։

5. Բացի հայերենից ի՞նչ լեզուներ գիտես։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մեսրոպ Մաշտոցը

2.

3.

4. ա, ի, ը, ու, օ, է

5.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել սեփական պատմությունը

2. հորինել մի պատմություն

3. պատմել սեփական անվան մասին

4. ճանաչել ձայնավոր հնչյունները

5. արտահայտել սեփական կարծիքը

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 52/1 Հարստություն /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ կարող է մարդը ստանալ գրքից։
2. Է՞լ ինչը կարող է մարդուն թևեր տալ։
3. Համաձա՞յն ես, որ գիրքն իսկապես հարստություն է։ Այլ հարստություններ կա՞ն։
4. Ի՞նչ ես զգում գիրք կարդալիս։
5. Ո՞րն է եղել քո առաջին գիրքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ գրքից կարելի է ստանալ գիտելիք, բացահայտումներ, արժեքներ
2. որ մարդուն թևեր կարող են տալ հայրենիքը, մայրիկը, ուսուցիչը
3. որ գիրքն իսկապես հարստություն է
4. որ շատ զգացումներ կարող է առաջացնել գիրքը
5.թե որն է եղել իր առաջին գիրքը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կատարել պարզ եզրահանգումներ

2. երևակայել

3. ստեղծագործել

4.  նկարագրել սեփական հույզերն ու ապրումները

5. պատմություն պատմել

Թեմատիկ պլանավորում

Դաս 53/1 Հարստություն /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ընդգծի՛ր հոգնակի թվով գոյականները:

Թերթեր, անուն, թևեր, աշխարհներ, ժամ, երգեր:

2. Ան նախածանցը միացրո՛ւ բառերին և ստացի՛ր ածանցավոր բառեր:

Ան

Տես, հաս, կոտրում, սահման

3. Գտի՛ր հականիշները:

Պարզ-

ազնիվ-

4. Գիրք և ուժ բառերով կազմի՛ր պարզ համառոտ նախադասություն:

5. Նոր վերնագիր տո՛ւր բանաստեղծությանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. թերթեր, աշխարհներ, երգեր

2. անտես, անհաս, անկոտրում, անսահման

3. բարդ, խարդախ

4. Գիրքը ուժ է

5.ինչ է վերնագիրը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել հոգնակի թվով գոյականները

2. կազմել ածանցավոր բառեր

3. գտնել հականիշները

4. կազմել պարզ համառոտ նախադասություն

5. հորինել նոր վերնագիր

Թեմատիկ պլանավորում

Դաս 54/1     Նշանների լեզուն  /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Եղե՞լ է, որ երբևէ դիմես նշանների լեզվի օգնությանը: Ի՞նչ նշաններ գիտես:

2. Գրի՛ր այս կետադրական նշանների անունները:  ,   :   ՞   ՛   ՝

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

3. Կարո՞ղ ես գուշակել՝  սրանք ինչ են նշանակում:



__________________________________________________



__________________________________________________________

4. Մեկնաբանի՛ր լուսացույցի գույները:



______________________________________________

__________________________________________

____________________________________________

5.Մի պատմություն հորինի՛ր որևէ նշանի մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ նշանները կարող են փոխարինել խոսքին
2. ստորակետ, վերջակետ, հարցական նշան, շեշտ, բացականչական նշան
3. լավ է, վատ է
4. կանգնիր, պատրաստվիր, անցիր
5. որ պատմությունը պիտի ունենա սկիզբ, ընթացք, ավարտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել որևէ իրավիճակ
2. ճանաչել կետադրական նշանները և տալ դրանց անվանումները
3. հասկանալ նշանի իմաստը
4. մեկնաբանել լուսացույցի գույների նշանակությունը
5. հորինել պատմություն

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 55/1   Կենդանիների լեզուն    /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Կենդանիները որտե՞ղ են խոսում մարդկանց նման։ Փորձի՛ր հիշել։

2. Կարո՞ղ ես օրինակներ բերել, թե կենդանիներն ինչպես են միմյանց հետ խոսում։

3.Կենդանիներին տա՛ր իրենց «տները»։ Սլաքներով մացրո՛ւ։

Բույն, մրջնանոց, փեթակ







4.Կենդանիներն ու իրենց արձակած ձայները միացրո՛ւ իրար։

Մլավոց, մռնչոց, հաչոց


________________________________

________________________________

________________________________

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. հեքիաթներում, առակներում
2. որ կենդանիները հաղորդակցվում են իրար հետ
3. մեղու՝ փեթակ, թռչուն՝ բույն, մրջյուն՝ մրջնանոց
4. առյուծի մռնչոց, կատվի մլավոց, շան հաչոց

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել իրական և անիրական պատմությունները

2. պատմել սեփական կենսափորձից

3. կենդանիները տեղավորել իրենց «տներում»

4. տարբերել կենդանիների արձակած ձայները

Թեմատիկ պլանավորում

Դաս 56/1 Բզեզի դպրոցը /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ բացեց վարպետ բզեզը մի օր։

2. Ովքե՞ր էին նրա աշակերտները։

3. Տարվա ո՞ր եղանակն էր, երբ բզեզը դպրոց բացեց։

4. Ի՞նչ հերթականությամբ էին դասավորված ծաղիկների ու բույսերի անունները։

5. Մի քանի ծաղիկների անուններ էլ դո՛ւ թվարկիր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ վարպետ բզեզը բացեց դպրոց
2. որ աշակերտներն էին թիթեռը, ճանճը, բոռը, մժեղը, մրջյունը, մլակը, մոծակը
3. որ ամառ էր
4. որ այբուբենի հերթականությամբ էին դասավորված ծաղիկներն ու բույսերը
5.մի քանի ծաղիկների անուններ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ոտանավորը կարդալ ուշադիր

2. առանձնացնել հերոսներին

3. տալ դեպքերի ճիշտ հաջորդականությունը

4. իմանալ այբուբենի հերթականությունը

5. թվարկել իրեն ծանոթ մի քանի ծաղկի անուն

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 57/1 Բզեզի դպրոցը /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր պատգամում վարպետ բզեզն իր աշակերտներին:

2. Քեզ ծանոթ ծաղիկները, բանջարեղենն ու ծառերը տեղավորի՛ր ճիշտ սյունակներում:

| ծաղիկներ | բանջարեղեն | ծառեր |
|---|---|---|
| կակաչ | վարունգ | ծիրանենի |
| | | |

3. Գտի՛ր հոմանիշները:

Զարթնել-

վերջացնել-

4. Ո՞ր կետադրական նշանը դնենք, որ նախադասությունը դառնա հրամայական:

-Արամ, գիրքդ տուր ինձ:

5. Ի՞նչ ծաղկի կամ բույսի անուն գիտես քո անվան սկզբնատառով սկսվող:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. լավ սովորել

2.որ իր շրջապատում կան և՛ ծաղիկներ,և՛ բանջարեղեն

3. զարթնել-արթնանալ, պրծնել- վերջացնել

4. -Արա՛մ, գիրքդ տո՛ւր ինձ։

5.անուններ, որ սկսվում են և՛ ձայնավորով, և՛ բաղաձայնով

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ ստեղծագործության հիմնական իմաստը

2.առանձնացնել ծաղիկը, բանջարեղենն ու ծառը

3.գտնել հոմանիշները

4.նախադասության հնչերանգից կռահելով՝ դնել համապատասխան կետադրական նշանը

5.թվարկել անուններ, որոնք սկսվում են ձայնավորով և բաղաձայնով

Թեմատիկ պլանավորում

Դաս 58/1 Թափառական երաժիշտները 1 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։




1.Ինչպե՞ս ձևավորվեց թափառական երաժիշտների խումբը։

2.Ովքե՞ր էին հեքիաթի հերոսները։

3.Ո՞ր քաղաք էին գնում երաժիշտները։

4.Երկու բառակապակցություններից ո՞րն է գործածված ուղիղ, որը՝ փոխաբերական իմաստով։

Չոր խոտ, չոր գլուխ

ուղիղ իմաստ

փոխաբերական իմաստ

5.Բառակապակցություններից մեկով կազմի՛ր նախադասություն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. իրենց տերերից դժգոհ կենդանիները միացան և ձևավորեցին երգչախումբ

2.որ հեքիաթի հերոսներն էին ավանակը, շունը, կատուն և աքլորը

3. որ քաղաքի անունը Բրեմեն է

4. որ չոր խոտ բառակապակցությունը ուղիղ իմաստ ունի, չոր գլուխը՝ փոխաբերական

5.որ նախադասությունն ունենում է ավարտուն միտք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.հասկանալ բնագրի հիմնական իմաստը

2.տեքստը կարդալ ուշադիր, հասկանալով

3.առանձնացնել կարևոր դեպքերը

4.տարբերել դարձվածքն ու բառակապակցությունը

5.կազմել նախադասություն

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 59/1   Թափառական երաժիշտները 1     /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Տերե՞րն էին դժգոհ կենդանիներից, թե՞ կենդանիներն իրենց տերերից։ Հիմնավորի՛ր կարծիքդ։

2.Գտի՛ր բառերի հականիշները։




3.Փորձի՛ր մեկնաբանել դարձվածքները։

Դուր գալ-

Ճամփա ընկնել -

գլուխը պահել -

4.Ընդգծի՛ր բայերը՝

Կյանք, փախչել, քաղաք, հարցրեց, աղքատ, ծերանալ, համաձայնվեցին

5.Դու ինչպե՞ս կվարվեիր ձեր տանն ապրող ծերացած կենդանու հետ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. տերերն էին դժգոհ կենդանիներից

2. ծեր-երիտասարդ, ծանր-թեթև, թույլ-ուժեղ

3. հաճելի լինել, ճանապարհվել, ապրել

4. փախչել, հարցրեց, ծերանալ, համաձայնվեցին

5. թե որն է ճիշտ վարվեցողությունը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.հասկանալ  տեքստի բովանդակությունը

2.իմաստից կռահելով՝  գտնել տրված բառերի հականիշները

3.հասկանալ դարձվածքների իմաստները

4.առանձնացնել բայը մնացած խոսքի մասերից

5.արտահայտել սեփական մտքերը

Թեմատիկ պլանավորում

Դաս 60/1 Թափառական երաժիշտները 2 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս աքլորը գլխի ընկավ, որ մոտերքում տուն կա։
2. Ովքե՞ր էին ապրում տանը։
3. Ինչի՞ց վախեցան ավազակները;
4. Ինչպե՞ս երաժիշտները հաղթեցին ավազակներին։
5. Նոր վերնագիր տո՛ւր հեքիաթին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. հեռվում լույս տեսավ

2. ավազակները

3. կենդանիների երգեցողությունից

4. միասնականությամբ

5. ինչ է արտահայտում վերնագիրը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տեքստը կարդալ ուշադիր

2.գտնել տեքստում առանցքային կետերը

3.դեպքերը դասավորել ճիշտ հերթականությամբ

4.հասկանալ տեքստի հիմնական գաղափարը

5.հորինել նոր վերնագիր

Թեմատիկ պլանավորում

Դաս 61/1 Թափառական երաժիշտները 2 /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Գրի՛ր բառերի հոմանիշները:

Պատուհան-

ջարդել-

քնել-

2. Ըստ գույների՝ պատկերները միացրո՛ւ և ստացի՛ր բառեր:




3. Դասավորի՛ր ճիշտ հերթականությամբ այնպես, որ ստանաս դարձվածք:

հետև գցել պականջի

4. Դարձվածքներն ու իրենց իմաստները միացրո՛ւ իրար:

Մութն ընկնել հասկացնել

Սիրտ անել        մթնել

Նշան անել        համարձակվել

5. Քո կարծիքով կենդանիներից ո՞րն ավելի կարևոր դեր ուներ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. լուսամուտ, կոտրել, ննջել

2. հայացք, լուցկի, համարձակ

3. ականջի հետև գցել

4. մութն ընկնել – մթնել, սիրտ անել-համարձակվել, նշան անել-հասկացնել

5. որ կենդանիներն ունեն իրենց դերը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գտնել տրված բառերի հոմանիշները

2. վանկերը միացնել և ստանալ բառեր

3. դարձվածքը դասավորել ճիշտ հերթականությամբ

4. հասկանալ դարձվածքը և նրա նշանակությունը

5. վերլուծել հեքիաթում կենդանիներից յուրաքանչյուրի դերն ու կարևորությունը

Թեմատիկ պլանավորում

Դաս 62/1 Առյուծը, գայլը և աղվեսը /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։



1. Ի՞նչ գտան մի օր առյուծը, գայլը և աղվեսը։
2. Ինչպե՞ս էին աղվեսն ու գայլը կոչում առյուծին։
3. Նշվածներից ո՞ր սյունակում կտեղավորես առյուծին, գայլին և աղվեսին։

**Վայրի կենդանիներ**

**Ընտանի կենդանիներ**

4. Նախ ածանցը ավելացրո՛ւ բառերին և ստացի՛ր ածանցավոր բառեր։



5. Քո կարծիքով  առյուծի արածն արդա՞ր էր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. մի խոյ, մի մաքի ու մի գառ

2.-ո՛վ, թագավոր

3. վայրի կենդանիներ

4. նախընթրիք, նախասենյակ, նախահայր, նախագիծ, նախավերջին, նախածանց

5.որ արարքն է համարվում արդարացի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. առակը կարդալ ուշադիր

2. տարբերել դիմելաձևը

3. տարբերել վայրի և ընտանի կենդանիներին

4. կազմել ածանցավոր բառեր

5. գնահատել առյուծի արարքը

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 63/1 Չորս խնձոր 1 /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։



1. Ի՞նչ կար այգում։
2. Ի՞նչ տեղի ունեցավ խնձորենու հետ մի օր։
3. Ծառի ամենաբարձր ճյուղին ո՞ր խնձորն էր բազմել։
4. Ո՞րն էր ամենադժբախտ խնձորը։
5. Ինչո՞ւ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. մի խնձորենի
2. զարդարվեց ճերմակ-ճերմակ ծաղիկներով և ունեցավ չորս խնձոր
3. առաջին խնձորը
4. չորրորդ խնձորը
5. նրա մեջ որդ կար

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.տեքստը կարդալ ուշադիր և հանգամանալից

2.առանձնացնել բնագրում ծավալվող կարևոր իրադարձությունները

3.տալ դեպքերի ճիշտ հաջորդականությունը

4.գնահատական տալ իրավիճակին

5. հասկանալ պատճառահետևանքային կապը

Թեմատիկ պլանավորում

Դաս 64 /1      Չորս խնձոր 1     /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ծառերի անուններ գիտես։ Շարունակի՛ր շարքը՝ ավելացնելով ևս երկուսը։

Բալենի, նռնենի, կեռասենի,տանձենի……………………

2. Ի՞նչ օրինաչափություն նկատեցիր։ Ինչպե՞ս են կազմվում ծառերի անունները։

___

3. Գտի՛ր և դեմ դիմաց գրի՛ր տրված բառերի հականիշները։

Համեստ      չար, վատ

ազնիվ      գոռոզ, մեծամիտ

բարի      խարդախ, խաբեբա

4. Ծառի վրա «թվականներ են աճել»։ Գրի՛ր դրանք բառերով։



5. Տրված թվականներին ավելացրո՛ւ –որդ կամ –երորդ ածանցը և կստանաս դասական թվականներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. ծիրանենի, դեղձենի

2. բոլոր բառերին ավելանում է –ենի ածանցը

3. համեստ-գոռոզ, մեծամիտ

ազնիվ-խարդախ, խաբեբա

բարի-չար, վատ

4. մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տասը, տասնմեկ, տասներկու

5. առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմեկերորդ, տասնկերկուերորդ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.կազմել ծառերի անուններ

2.հասկանալ օրինաչափությունը

3. ըստ բառիմաստների՝ կազմել հականիշների զույգեր

4. գրել 1-12-ը քանակական թվականները

5. 1-12-ը թվականները դարձնել դասական

Թեմատիկ պլանավորում

Դաս 65/1   Ջրոս խնձոր 2  /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Աշնանը այգին ի՞նչ գույներ է «հագնում»:

2. Քո կարծիքով ո՞ր խնձորն ավելի շատ օգուտ տվեց մարդկանց:

3. Տեքստից առանձնացրո՛ւ հատուկ գոյականները:

4. Նկարիչ բառի օրինակով ևս երկու բառ գրի՛ր:

Նկար + իչ = նկարիչ

երգ + իչ =

մարգ + իչ =

5. Նկար բառը միացրո՛ւ այս արմատներին և ստացի՛ր բարդ բառեր:

ինքնա

ջրա          նկար          յուղա

բնա          ծովա

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ ծառերը աշնանը լինում են դեղին, կանաչ, կարմիր, ոսկեգույն

2.սյուժեն

3. որ Հուրի, Անուշիկ, Ոսկեշողիկ բառերը հատուկ անուններ են

4. որ ածանցներով կազմվում են նոր բառեր՝ նկարիչ, երգիչ, մարզիչ

5. որ ինքնանկար, ջրանկար, ծովանկար, յուղանկար, բնանկար բառերը բարդ բառեր են

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. թվարկել աշնան գույները

2. հասկանալ տեքստի հիմնական իմաստը

3.տարբերել և ճիշտ գրել հատուկ գոյականները

4. կազմել ածանցավոր բառեր

5.պատկերացնել և կազմել բարդ բառեր

Թեմատիկ պլանավորում

Դաս 66/1   Ձեռքերը      /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ըստ հեղինակի ձեռքերն ի՞նչ  անելու համար են։

2. Բանաստեղծության առաջին տողում ձեռքեր  բառին ի՞նչ հատկանիշ է տրված։

3. Ըստ պատկերների հոմանիշային զույգեր կազմի՛ր։




4. Ծանր  բառի հականիշը նու՞րբը, թե՞  թեթևն  է :

5. Կարդալ, ծիծաղել, երգել , ժպտալ, նկարել.  սրանք  գործողություն ցույց տվող բառեր են։ Տրվածներից ընտրի՛ր միայն գործողություն ցույց տվող բառերը։









Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ ձեռքերը ցանելու, հնձելու , գրկելու, խոցելու, հաղթելու համար են,
2. որ ձեռքերը բնորոշվում են գեղեցիկ ածականի օգնությամբ,
3. որ գեղեցիկ-սիրուն, ճանապարհ-ճամփա, մանուկ-երեխա բառազույգերը հոմանիշներ են
4. որ ծանր բառի հականիշը թեթևն է ,
5. որ խաղալն ու վազելը գործողություն ցույց տվող բառերն են :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել՝ ձեռքերն ինչ անելու համար են,

2. գտնել ձեռքերը բնորոշող բառը,

3. կազմել ճիշտ զույգեր,

4. նշել բառի հականիշը,

5. առանձնացնել գործողություն ցույց տվող բառերը:

Դաս 67/1 Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք /կարդալ/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Սողոմոն թագավորն ի՞նչ ուներ:
2. Ի՞նչ վնաս էր հասցնում փիղը:
3. Մրջյունների գանգատը ինչ-որ բան փոխե՞ց:
4. Եկան աշխարհի բոլոր մրջյունները՝ մեծ ու փոքր, առողջ ու տկար, թույլ ու ուժեղ, անգետ ու գիտուն նախադասությունից գտի՛ր հականիշների զույգեր:
5. Մրջնաբնի մոտից գարշահոտ էր գալիս նախադասությունից կռահի՛ր՝ գարշահոտությունը վա՞տ, թե՞ լավ հոտ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ Սողոմոն թագավորը մի փիղ ուներ,
2. որ փիղը քանդում ու ավերում էր ամեն ինչ,
3. որ թագավորը անտեսեց մրջյունների գանգատը,
4. որ <u>մեծ ու փոքր, առողջ ու տկար, թույլ ու ուժեղ, անգետ ու գիտուն</u> բառազույգերը հականիշներ են,
5. որ <u>գարշահոտը</u> վատ հոտն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.ասել՝ ինչ կենդանի ուներ թագավորը,

2. թվարկել՝ ինչ էր անում փիղը,

3. հիշել թագավորի՝ մրջյունների գանգատն անտեսելու փաստը,

4. գտնել հականիշների զույգերը,

5. բացատրել բառի իմաստը:

[Թեմատիկ պլանավորում]

Դաս 68/1 Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք  /պատմել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ լուծում գտան մրջյունները:
2. Ի՞նչ հասակացավ Սողոմոն արքան:
3. Նշի՛ր փնտրել բառի հոմանիշը:







4. Մրջյուն բառի հոգնակի թիվը կազմվում է -ներ մասնիկի միջոցով: Ընտրի՛ր այն բառը, որի հոգնակին նույնպես կազմվում է – ներ մասնիկով:

փիղ

թռչուն

5. Տնկել բայը դի՛ր համապատասխան ժամանակով:







| | | |
|---|---|---|
| ներկա ժամանակ | անցյալ ժամանակ | ապառնի ժամանակ |

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. որ մրջյունները մեծ փոս փորեցին , որտեղ էլ փիղն ընկավ և սատկեց,
2. որ պետք չէ անտեսել անգամ փոքր թշնամուն,
3. որ փնտրել բառի հոմանիշը որոնելն է,
4. որ թռչուն բառի հոգնակին է կազմվում -ներ մասնիկի միջոցով,
5. որ տնկում է- տնկեց- տնկելու է ձևերը այդ բայի երեք ժամանակներն են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.համառոտ ներկայացնել մրջյունների հնարամտությունը,

2.ասել հեքիաթի հիմնական իմաստը,

3. ընտրել բառի հոմանիշը,

4. կազմել հոգնակի թիվը,

5. կազմել բայի երեք ժամանակները:

Թեմատիկ պլանավորում

Դաս 69/1 Սեխի թուփն ու ընկուզենին (ընթերցել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ ստեղծագործություն է <<Սեխի թուփն ու ընկուզենին>>:
2. Ինչե՞րն են հանդիսանում առակի հերոսները:
3. Առակի մեջ մարդկանց բնութագրող ի՞նչ բառեր կան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ստեղծագործությունը առակ է:
2. Իմանա, որ առակի հերոսներն են սեխն ու ընկուզենին:
3. Իմանա, որ առակում մարդկանց բնութագրող բառերն են՝ համեստ, խոնարհ, համբերատար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել և նշված օժանդակ բառերը գրել սովորել բայի հետ:

   Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Այն այլաբանական բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է, որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են:

2. Գուշակել հանելուկները:

   Բարձրում կախված,
   Ընկնում եմ ցած,
   Մինչև չկոտրես,

Համը չտեսնես ,

Չես հասկանա դու,

Ի՜նչ համեղն եմ ես: /__________/

Այն ինչ՞ն է ,ինչ՞ը

Նարնջագույն է նարինջ չէ,

Մեծ է ձմերուկ չէ,

Համ ձվաձև,համ կլոր է:/___________/





3. Գտնել համապատասխան զույգը:

-հոգատար - ազնիվ - բարի - համեստ

ա.չի պարծենում,իրեն ուրիշներից բարձր է դասում

բ.մեղմ է,մարդկանց լավն է ցանկանում

գ.հոգ է տանում ուրիշներին,օգնում է նրանց,ուշադիր է

դ.չի խաբոխարդախություն չի անում,շիտակ է

Դաս 70/1 Սեխի թուփն ու ընկուզենին (անգիր):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ մարդկանց է խորհրդանշում Սեխը:
2. Ինչպիսի՞ մարդկանց է խորհրդանշում Ընկուզենին:
3. Ո՞րն է առակի հիմնական միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ Սեխը խորհրդանշում է պարծենկոտ մարդկանց:
2. Իմանա ,որ Ընկուզենին խորհրդանշում է համեստ մարդկանց:
3. Իմանա ,որ առակի հիմնական միտքն է չլինել պարծենկոտ,լինել համեստ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գրել հոմանիշները:

պարծենկոտ
գոռոզ
առաքինի
պարկեշտ
մեծախոս
համեստ

2. Գտնել տրված նախադասության օժանդակ բայերը և գրել ժխտական ձևերը:

Ա.Դպրոցում բոլորը սիրում էին համեստ Սոնային:

Բ.Պարծենկոտ տղան մոռացել էր հանդիպման օրը:

3. Դասավորել բառերն ըստ նշված գույների և գրել ասացվածքները:



Ա. պարծենցողը շատ ցած շուտ կընկնի



Բ. թողիր առուն նախ քեզ հետո գովիր

Դաս 71/1 Դեղձենին (ընթերցել):                                    Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր ծառերն էին հեքիաթի հերոսները:

2. Ո՞ր ծառն էր պտղառատ:

3. Ո՞ր ծառն էր ցանկանում նմանվել ընկուզենուն:

4. Ո՞ր ծառն էր խորհուրդ տալիս:

5.Ի՞նչպես ավարտվեց հեքիաթը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա ,որ հեքիաթի հերոսներն էին ընկուզենին, դեղձենին,սալորենին:

2. Իմանա ,որ պտղառատ էր ընկուզենին:

3. Իմանա,որ ընկուզենուն ցանկանում էր նմանվել դեղձենին:

4. Իմանա,որ խորհուրդ էր տալիս սալորենին:

5. Իմանա ,որ հեքիաթի վերջում դեղձենին կոտրվեց,իսկ պտուղները նեխեցին,կորան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

**1.** Միացնել արմատն ու ածանցը և գրել ածանցավոր բառը:

| | |
|---|---|
| տանձ + ենի = | ընկույզ + ենի = |
| սալոր + ենի = | խնձոր + ենի = |
| դեղձ+ ենի = | բալ + ենի = |

**2.** Առանձնացնել բառերն ըստ աղյուսակի:

դեղձենի,կաղնի,սալորենի,բարդի,ընկուզենի,թխկի,բալենի,կեչի

| Պտղատու ծառեր | Ոչ պտղատու ծառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

**3.** Գուշակել հանելուկը և գրել այդ պտուղի ծառի անունը:

Թավշյա հագուստ ունեմ,

Կարմիր թուշիկ ունեմ

Ապրում եմ հարավում,

Քաղցրանուշ համ ունեմ:/------------ /

**4.** Ըստ գույների գրել բառակապակցությունները:

լացող

կաղնի

արծաթափայլ

եղևնի

դարավոր

ուռենի

սլացիկ

բարդի

սալորենի

բերքառատ

**5.** Ընտրել իմաստին համապատասխան դարձվածքը:

Ա. աչք դնել

Բ. ականջ դնել

Գ. աչքի ընկնել

Դ. գլուխ պահել

Ե. գլխի ընկնել

- կռահել,հասկանալ
- հավանել,ձեռք բերելու մտադրություն ունենալ
- լսել
- ուշադրություն գրավել,նկատվել,երևալ
- աշխատանքի մեջ եռանդ չցուցաբերել

Թեմատիկ պլանավորում

Դաս 72/1 Դեղձենին (պատմել):

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հեքիաթում ո՞ր ծառն էր նախանձ:
2. Հեքիաթում ո՞ր ծառն էր խորհրդատու:
3. Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ  հեքիաթում նախանձ էր դեղձենին:
2. Իմանա, որ խորհրդատու էր սալորենին:
3. Իմանա, որ հեքիաթը սովորեցնում է նախանձ չլինել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար  սովորողը պետք  է կարողանա.

1. Արտագրել և ընդգծել մեկ դրական, մեկ ժխտական բայ:

Մի այգում ընկուզենու կողքին աճել էր մի դեղձենի: Նա շարունակ նախանձով նայում էր  շռայլորեն ընկույզ բռնած իր հարևանի ճյուղերին:
— Այդ ինչի՞ց է, որ նա այդքան շատ պտուղներ ունի, իսկ ես՝ այդքան քիչ, — չէր դադարում փնթփնթալ անխոհեմ ծառը: Մի՞թե դա արդարացի է: Թող ես նույնպես նույնքան դեղձ ունենամ: Ինչո՞վ եմ նրանից վատը:

2. Ընթերցել  և գրել նշված բառերի հականիշները :

— Աչք մի տնկիր ուրիշինի վրա, — մի անգամ ասաց նրան մոտակայքում բնակվող մի ծեր սալորենի: — Մի՞թե չես նկատում, թե ինչ ամուր բուն և ճկուն ճյուղեր ունի ընկուզենին: Փոխանակ անիմաստ փնթփնթաս ու նախանձես, ավելի լավ է ջանաս, որ բարձրորակ և հյութեղ դեղձեր աճեցնես:

/անորակ, իմաստալի, ծուլանալ,թույլ/

3. Հեքիաթի այս հատվածին համապատասխան ընտրել ասացվածքներ:

Եվ ահա մի օր էլ, ծառը տնքաց ծանրությունից, բունը ճրթոցով կոտրվեց, իսկ հասած դեղձերն ընկան գետնի վրա, որտեղ էլ մնացին փտելու, անվրդով ընկուզենու ոտքերի մոտ:

. Նախանձը թույն է սրտի համար:

.Որտեղ ընկերություն կա, այնտեղ կա համաձայնություն:

.Ուրիշի ունեցվածքին աչք մի դիր:

.Մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը:

. Երբ դու այնքան զոհ լինես քեզնից, որ այլևս չհամեմատվես ու չմրցես որևէ մեկի հետ, բոլորը կսկսեն հարգել քեզ: